ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԱՅ

ԺԸ· ՏԱՐԻ 1888 ՆՈՅԵՄԲԵՐ

ԲԵՐՈՒԶԱԿ

(ՓԻՐՈՒԶԷ)

Վինէրվալ՝ Սուրեան Ալպեանց այս մոլեռն, որ կ'տարա-ծուի մինչև Աւստրիոյ մայրաքաղքին դուռը, ունի ծալքեր որ չրջագայողներու կ'ընծայէ այլազան և հրապուրելի ճեմելիներ։ Ասոնք՝ կամ նեղ հովիտներ են, որ հեղեղանման առուակներէ կ'ոռոգուին և չրջապատուած են գալարուտ դարևանդներէ, զոր ահաւոսիլ անտառներ կ'բոլորեն, կամ բարձրարերձ դա-պաթներ՝ որոց կարելի է միայն մօտենալ Ալպեան ճչմարիտ ու-ղիներու միջոցաւ, ի բաց առեալ մի քանին, ինչպէս Գոլդն-պերկ, Լէօբոլտսպերկ, Սոֆիէն Ալպ՝ որոց կողին վրայ չահա-դէտները չինած են երկաթեայ նուրբ ուղիներ։

Այս բարձանց վրայ կ'պարզին աչքը հիանալի չրջապատակեր-ներ, անտառուտ լերանց հորիզոններ որ կ'երկննան անհուն հարաւային կողմն. սարեր դարած կան սարերու վրայ։ Ստորև՝ Վիէննա գաշտավայրի մէջ կ'երևի իր լայնածիստ արահետնե-րով և հոյակապ չէնքերով, Ս. Ստեփաննոսի գանգակատան սր-

բամէտ ծայրն՝ կեղրոնին մէջ կանգուն, և հեռուն՝ Պլովէտիւի պալատն սպիտակափայլ՝ Ջինարանի մը ազոյն երկար չինուածքեանց ընդ առաջ։

Իսկ խորը կ'տեսնուի փառասէր Դանուբը, իր անհամար կղզիները, արվնածիր գալարեաց կոյտեր, որոց անջրպետներուն մէջ կ'փալփլին արևահար ջրին շղուճները. միւս եզրը կը պարզուի Մարչի անսահման դաշտն՝ որու բոլորակի ծիրն է կապուտակ, առաջնահան և դալարչային։

Վիէննացիք սովոր են՝ գարնան, գոնդ գոնդ քաղքին չորջակիները պտոյտի ելնել և կ'զբօսնուն հանդարտիկ ու ղուարթ։ Աղմկալի չէ իրենց խնդութիւնն՝ որ միշտ ծանր ու խաղաղ կ'երևի։ Հաղուագիւտ երևոյթ մ'է արբած մարդ մը։ Երջանկացողները կ'մտնեն այն անթիւ սրճարաններն կամ դիւղային պանդոկներն՝ որ անվրէպ կ'դանուին մէն մի ճորակի մէջ կամ լեռի մը գագաթը։ Անդ կ'նստին ընտանեօք տեսակ մը սերով եփուած սուրճ խմելու, զոր կ'անուանեն խառնուրդ, կամ խորոված վառեկի առատ կտորներ ուտելու։ Այդ ուտեստը կ'առաղնեն դեղձան, թաւշակերպ, հաժեղ, անհամեմատելի գարեջրով մ'որ միշտ սառոյցով կ'մեծարուի, մինչև իսկ ամենէ անչուք գիւղակի մէջ, այնպէս որ աշխարհիս վրայ և ոչ երկիր մը կարող է պարծիլ թէ ունի այդ գարեջրի նման ըմպելի մը։

Երբ այս եղերայսիրական ճաշերը կ'լմնանան, գբօսասէր խմբեր հեռաւոր մարգագետնի մ'անկիւնը կ'քաշուին, և եթէ խմբակի մի անդամն, ինչպէս սէպ կ'պատահի, քիչ չատ երաժշտասէր անձ մը լինելով իր ձեռնադաշնակը հետը բերած է, իսկոյն պարերը կ'սկսին և կ'շարունակուին՝ ցորչափ մառը մանող արևն իր յետին վարդագոյն նշոյլները կ'արձակէ մօտակայ լեռին սարին վրայ։

Այս չրջագայութեանց մէջ ամենէ գեղեցիկ և բանուկ ճանապարհներէ մին է Պլովի հովիտը, որ դէպ ի հարաւ՝ վիէննայէն տասներկու հազարամեղրի չափ հեռի կ'գտնուի և որու մակից վրայ կ'կանգնի Մէօտլինկի սիրուն գիւղը։ Այս հովիտը պարփակուած է անտառուտ լեռներու խորը։ Անպառաժներ՝ որ ուռնին անհեթեթ չրջապատ և սեպաձև միջնորմներ կ'բոլորեն այն բարձանց կատարը։ Ջորակին տէրը՝ Լիեզենշդայնի մի իշխան, անչուշտ քաւական չգտնելով անոր բնական գարդարանքը, փափաքած է լրացնել դէպ ու դէն կանգնելով արուեստական աւերակներ՝ որ նկարագեղ երևոյթ մը կ'ընծայեն։

Առաւօտ մը՝ երբ սովորական ժամէն առաջ դինուորական մարշանքը լմնցուց՝ Պէլա Լոմանի ուշց օգուտ քաղել իր մէ քանի սպառազէն ժամերէն և ձին քշեց սրարշաւ դէպ ի Մէօա լինկ: Հասնելով այդ դիւղն, անցաւ այն ջրուղիի տակէն որ Վիէննա կ'առնի Շէնպերկի սարոյոը գտնուղ սքանչելի աղբիւրի մը ակնավէիտ և առատ ջրերը: Այդ մեաւ Երկու Ագռաւներու պանդոկը, որու օրմերն՝ դարաւոր ծառերու տերևներէ հովանուտ, կ'բարձրանան բնակչէն և բազմաթոռ կրկէսի մը մեաքը: Աստ իջաւ Պէլա, ձին տուաւ որ ախոռը տանին, և ինք սկսաւ քալել հետիոտն դէպ ի հովտին խորը:

Բուռն փոթորիկ մ'ելեր էր դիւերն և իր աւերմանց բազմաթիւ նշանները ճպած էր: Գետինը ցիր ու ցան կ'երևէին ծառերու բեկեալ ճիւղեր: Արմատախիլ եղևիններ ընկած էին հողին վրայ, ուրիշներ՝ մօտակայ ծառերու վրայ յենած՝ սգալի, դեռնահակ երևոյթ մ'ունէին և անկայուն ու երերուն վիճակի մը մէջ կ'երևէին: Լեռներու բարձունքէն կուտակեալ ջուրն ուղղօրէն իջած էր և դարևանդները փորելով իր հետ թաւալած էր ապի և քարերու կուտակներ, որ տարածուելով ճամբուն վրայ տեղ տեղ դժուարացուցած էին անց ու դարձը: Ահարկու խոշորութեամբ ժայռի բեկորներ քակուելով անգամ կրային կատարներէ՝ որ գրեթէ կ'սաւառնին ճամբուն վրայ, գլորեր էին մինչև հովտին խորը: Այս բոլոր ժայռերը զանազատնելու համար բաւական էր դիտել անոնց նորաբեկ ու թարմ ճեղքերը, անոնց կողերուն վրայ գտնուած տատիկ հողը, մանրեզնարար թաւալգլոր լինելու առեն՝ դարևանդներու վրայ փորած ակօսը:

Գիշերային փոթորկին և թանձուրթեան յաջորդեր էր պայծառ և լուսափայլ օր մը: Զուարթուն արևն կ'տահէր կ'անցնէր մանր ու սպիտակ ամպերու միջէն, որ կարծես թէ պիրար կ'հալածէին կապուտակ երկինէ երեսն՝ իբրև մոլորագին ոչխարներու հօտ մը: Արեգն իր լուսովը կ'ողողէր դեռ ևս տերևներու ծայրը կախուած ջրի կայլակները. իսկ տատիկ հողին ելնող թեթև գոլորշին կ'բարձրանար հանդարտիկ օդին մէջ:

Պէլա ամրաքայլ կ'քալէր՝ ծծելով լանդպին անուտուսին հատուածներով լի թարմ օդը: Սոյն առաւօտեան ժամուն ցանցառ էին չրջագայք. սակայն երբ պարապ կառքի մը քովէն անցաւ, մինչ կառապանն ձիերը ծանր ծանր կ'քշեր, քիչ մը հեռուն տեսաւ նորատի աղջիկ մ'որ ունէր երբեմն և չնարհալի հասակ,

և տարօրէն կին մը որ համեստօրէն հագուած էր և անոր կ'հետևէր՝ այնպէս որ Պէլա կարծեց թէ դաստիարակուհի մ'է։

Նոյն պահուն նորատի սպան կ'հետևէր լեռի մ'ուղին որու դագաթին վրայ կ'բարձրանայ փոքրիկ յիշատակարան մը, այս է Հիւսարներու Տաճարը, ուր կ'հանգչին վաղրամի մէջ մեռնող մի քանի պինւորներու մարմինները։ Բայց Պէլա ո՛չ Հիւսարներու վրայ կ'խորհէր և ոչ 1809ի արիւնահեղ ճակատամարտին վրայ։ Ակնապիշ կ'նայէր նորատի չրջազգայ օրիորդն, որ կարծելով թէ ոչ ոք կ'դիտէ զինք, իրև եղնորմի կ'չարժէր թեթևաոտն, կ'ոստոստէր ճամբուն զատնթափին վրայ՝ մատանետուննկ քաղելու, որոց մի որայն ուներ արդէն ի ձեռին։ Խնդագին աղաղակներ կ'արձակէր, երբ կ'գտներ բարձր խոտերէն վեր երևցող երկայն ցօղուն մը իր ծիրանեզոյն զանգակիներով լի։

Իրօք՝ չքնաղ էր այս տեսիլը։ Իր բայ գոյնով չրջազգեստն անտառներու մութ երեսին վրայ կ'զարնէր, և լայնածիր յարդէ գլխարիին տակէն, որու մի կողմն վեր ելած էր, դեղձան մազերու ճոխ հիւսակ մը կ'իջնէր մեռաքսի նման՝ ոսկեփայլ։ Օրիորդը չէր դարձած Պէլաի կողմն, ուստի զօրականն չէր տեսած անոր դէմքն և չգիտէր թէ սիրուն էր։ Շատ չատ հարևանցի ուշ կողմնակի նշմարեր էր երեսն զոր անագիւտ գտեր էր։ Վերջապէս՝ քիչ մ'ետք պիտի լաւ ևս ճանչէր այս օրիորդը։ Պղէն դաստիարակուհւոյն եղած բարձր վայրը հասած էր։ Հապիւ մի քանի քայլ կար իր և նորատի օրիորդին մէջ, որ նոյն պահուն կանգ առեր էր իր վիւնջը կապելու։ Եթէ Պէլա մօտէն անցնէր զգոյշ և հանդարտ, գրեթէ առանց գլուխը դարձնելու, լաւ պիտի տեսնէր՝... ։

Յանկարծ Պէլայի ուշադրութիւնը գրաւեց իր ձախ կողմն ընկնող քարերուն հանած ձայնը. կարծես թէ բարձրէն մէկը կ'զուարճանար հովին խորը գտնուղ չրջագանները քարկոծելու։ Ապա լսելի եղաւ ահռելի գոռում մը, նման ծանր մարմնոյ մ'անկման դղրդիւնին որ բնկեալ ծառերու խչրտոցին կ'միանար։ Գիչերուան հեղեղային անձրևէն սասանած ահագին ժայռ մը՝ փոքր առ փոքր սահեր էր բրտի կաւի մը կոյտին վրայ և իր կռուանը կորուսելով բարձր լեռէն վար կ'թաւալէր սոսկալի ոստումներով և ամեն ինչ իր ճամբուն վրայ կ'աւլէր կ'ճզմէր։ Ժայռն հագիւ չիսուն կանգուն հեռի էր ճամբէն, երբ Պէլա դիտեց զայն որ կայծակի արագութեամբ կ'գլորէր կ'իջնէր ճիշտ

նորատի օրիորդին ուղղութեամբ։ Իսկ օրիորդն այդ աղմուկին և իր ընկերուհւոյն ճիչերէն ուշաբերելով՝ իր նայուածքը պարձուցած էր դէպ ի վտանգի կողմն, բայց կարծես թէ երկիւղէն սառած՝ յանկարծ ջլատուեր և հողին գամուեր էր, այնպէս որ սարսափէն խուճապուցած աչօքը կ'նայէր մօտալուտ մահուան և քանի մը քայլ առնելու կարողութիւն չունէր։

Պէլա՝ արագ վայրկեի նման, վազեց, գրկացը մէջ առաւ օրիորդն և իսկոյն հեռացաւ այն վայրէն, այնպէս որ կարծես թէ թեւեր ունէին իր ոտները։ Ժայռն ընկաւ ճամբուն վրայ, ճիշտ այն վայրն ուր դեռատի օրիորդին քնքուշ կրունկներն փոսեր բացեր էին խոնաւ հողին վրայ, չօշափեց իր ուսն՝ այն աստիճան որ իր վրին վրայ զգաց տեղափոխուած օդէն յառաջ եկած հովը, և անկից ոստոստեց մինչև առուակին փոսն՝ որուն ջուրն ցայտեց շատ բարձր սպիտակ փրփուրի նման։

Այն ժամանակ՝ վտանգն անցնելով, Պէլա կանգ առաւ և իր ակնարկը դարձուց այն անձին վրայ զոր սոսկալի մահուան մը ճիրանէն ազատեր էր։ Օրիորդը նուաղած էր։ Իր դլուխն անշարժ կ'հանդչէր երիտասարդին լանջին վրայ. աչացը կոպերը գոց և չրջապատուած էին մետաքսանման երկայն արտեւանունքով՝ որոց ստուերը կ'իջնէր գունատ և մարմարի պէս սպիտակ այտերուն վրայ։ Իր թեւերէն մին կախուած էր անշարժ. միւսը կ'սեղմեր իր կուրծքին վրայ մատանետունկի վրայն զոր իր կարկամած ձեռքը չէր ձգած։ Պէլա ըսաւ իւրովի թէ երբէք աւելի սիրուն դէմք մը չէր տեսած։ Դաստիարակուհին շնչասպառ հասեր էր և սուր ճիչեր կ'արձակէր։ Պէլա ջանաց զանի հանդարտեցնել և խնդրեց որ երթայ դեռատկին մէջ թրջէ իր թաշկինակն՝ որպէս զի նորատի աղջկան քունքը լուան. ապա իր շորհալի բերան կրկնով սիլտ, ետ դարձաւ իր առաջին տեղն՝ յուսալով սրարշաւ հասնող կառքին բարձերուն վրայ զանի տեղաւորել։ Բայց Պէլա զգաց որ օրիորդն կ'շարժէր և տեսաւ որ ինքզինքին գալով՝ կ'ջանար նա մեղմիկ վար իջնել։

Երբ օրիորդն գետինը ոտք կոխեց՝ իր աչունքն՝ զոր պահ մը լոմանիի վրայ դարձուցած էր, իսկոյն իջեցուց և իր այտերն որ քիչ մ'առաջ այնքան ժպտուն էին, վարդեր բացին։ Եւ իրաւի՝ երբ օրիորդ մը սոսկալի վտանգի մ'առջև ուշաթափ կըմնայ, և սթափելէն ետև՝ ինքզինք կ'գտնէ ճիւաղ զօրականի մը գիրկն, բնազդս կ'այլայլի և իր սիրտը սովորականէն աւելի կ'ակսի բաբախել։

Միւս կողմէ՝ Պէլա ևս չվոխած կ'երևէր։ Անմեկնելի այլայլութիւն մը դինքը դրաւեր էր, և քիչ մնաց ներողութիւն պիտի խնդրէր թոթովելով այն ազատութեան համար որու սովորած էին դինք պարագանները։ Սակայն իրարու մէջ և ոչ խօսք մ'անցաւ։ Շնորհալի աղջիկն՝ դեռ ևս դողդոջելն, իր վռնչչէն ծաղիկ մը հանեց և ընծայեց Պէլայի։ Զօրականն ուրախալի դէմքով առաւ ծաղիկն և խենդի պէս խոյս առաւ, մինչ ապուչ կրճած էր դասախաչուհին որ արտօրնօք կ'հանէր՝ ի ձեռին ունենալով թաշկինակն զոր գետակին ալազ ջրին մէջ թաթխեր էր, և որ այժմ անօգուտ էր։

Գ.

Պէլա Լոմանի տեսած չէր բնաւ, այս անակնկալ հանդիպումէն առաջ, դեռատի օրիորդն որ իր վրայ խոր տպաւորութիւն մ'ազդած էր։ Միթէ պարտ էր հետևցնել, թէև այս բանս անհատնական կ'թուէր, թէ օրիորդն չէր պատկաներ ընկերութեան այն դասակարգին որու մէջ մինք մուտ ունէր։

Արդարև՝ ի վիէննա՝ ուր աշնուպետական դասն հեռու կ'պահէ, չատ աւելի խստութեամբ քան այլուր, ընկերութեան միւս կարգերը, ինչ որ կ'կոչուի բարձրագոյ իր չրջանն չատ սահմանափակ է և կ'բաղկանայ միայն հարիւրի չափ անձերէ որ իրարու ծանօթ են, մեծ մասամբ արիւնակից են, և ամեն իրկուն անվրէպ միասին կ'գտնուին եղանակին սովորական ընդունելութեանց ժամանակ։ Բայց ասոնք՝ գաղաքն համեմատարար ոչ այնքան ընդարձակ և ընկերային կեղրոններն, հեմելիներն, թատրոններն, թատրոններն սակաւաթիւ, տեսակցութեան սրահներն անպակաս են և մի և նոյն անդամոց մէջ աւելի չատ մտերմական յարաբերութիւններ կ'հաստատուին։

Թէև իր յարաբերութեանց մէջ սահմանափակ՝ վիէննայի բարձր ընկերութիւնն յաւին ծայր չքնաղ է։ Ունի աւանդական ոգևորութիւն և վայելչութիւն և զուարճութեանց պաչտամունքն ունի բազմաթիւ և ջերմեռանդ սպասարկուներ։ Ո'վ որ գիտէ և պատիւ ունեցած է կենակցիլ այդ ընկերութեան հետ, կարող է դիւրաւ ըմբռնել թէ նա ինքն իրեն կ'բաւէ և ուրիչի կարօտ չէ։

Անդոնիա փոքրիկ կոմսուհին՝ այս դերընտիր դասուն կ'պատկանէր։ Բայց Պէլա բնաւ չէր տեսած դինք, վասն զի կամաւ-

հեղն դատարակոթիւնն հազիւ աւարտած լինելով՝ դեռ ևս մնաց չէր դատ նոյն ընկերութեան մէջ։ Բայց ատոր՝ ատկ վի-ճննա չէր իջներ և տարւոյն մեծ մասն՝ Բրակալի չրջակայքը՝ հո-բենական ապարանը կ'անցընէր։ Եթէ նորատի ապայն այնքան յուզած չլինէր և ակնարկ մը նետէր կառքին տապակին վրայ, պիտի ճանչէր Լ'օվէնպէրկի պինադրոմն, և այս բաւական պի-տի լինէր իմանալու թէ ո՞վ էր այն օրիորդը։

Իրօք՝ ամեն մարդ դիտէր որ հեծելազօրուն զօրապետ՝ Լ'օվ-վէնպէրկ իշխանն, բաւական ժամանակէ ի վեր այրի, ունէր միակ դուստր մ'որ հուչակաւոր էր իր հրաշալի գեղեցկութեան համար։ Նոյնպէս չատեր դիտէին թէ իշխանն իր դստեր դաս-տիարակութեան հոգը ստանձնելու, ինչպէս նաև, իր ծերու-թեան պատճառաւ, հրամանատարութեան ձանր պաշտօնէն քաշուելու համար, խնդրած էր Աւստրիոյ կայսրէն որ գինւո-րական ծառայութիւնը թողու։ Կայսրն, Ֆրանսուա Ժոզէֆ, որ մասնաւոր սիրով կ'պատուէր իշխանը, իր սրբուհեաց մէջ ա-նոր պաշտօն մը տուեր էր՝ իբրև վերին վարձատրութիւն իր մա-տուցած ծառայութեանց համար։

(Շարունակելի) Շ. ԳՈՐՊԷՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ*

ԴԱՍ Ժ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԳԱՅԱՐԱՆԱՅ (Շար.)

Տեառնելիէ. — Կարգն եկաւ խօսիլ ղպայարանաց դերազու-նին՝ այս է պեառնելիէի վրայ։ Պարտ է, ինչպէս կ'ըսէ Ռուսօ, ու-սուցանել մանկուան պեառնել ու նայիլ. վասն զի աչքը կ'նչմարէ անթիւ իրեր զոր իրօք չտեսներ։ Ահա կ'գրեմ ուշադիր նայե-լով սոյն թերթին որու վրայ կ'գծեմ այս բառերը։ Մէկ կողմէ

* Տե՛ս Հոկտեմբեր տետադիր, երես 455։

կ'ուզեմ դիրքն բացուած իմ առջև, և միւս կողմէ կաղամարն որ աջկոյս կ'գտնուի: Արդ՝ կարող եմ ըսել որ կ'նայիմ անոնց: Անշուշտ, չեմ կարող: Հետևապէս տարբերութիւնը մեծ է տեսնելու ու նայելու գործին մէջ. վասն զի մին բոլորովին բնազդական է, մինչդեռ միւսը կամաւոր: Ուստի հարկ է ուսուցանել մանկանց պէտք եղած:

Տեսանելիք ընդհանուրաց ծանօթութիւններ. — Յայտնի է թէ՝ ի սկզբան աչքը կ'ըմբռնէ միայն գոյները, լուսոյ և ստուերի զանազան երևոյթներն հարթ մակերևոյթի վրայ: Սակայն երբ խնդիրը բարձրանդակի, թանձրութեան ճանաչման, անջրպետի դնահատման, հեռանկարի ծանօթութեանց կիրառութեան վրայ է, այն ժամանակ՝ այդ ըմբռնումներն հարկ է ստանալ սովորութեամբ և աչաց կրթութեամբ:

Կ'պատմեն թէ Չէզելդեն* երկար տարիներէ ի վեր կուրութեամբ տառապող հիւանդի մ'աչքն երբ կ'բուժէ, նորարոյժն բաւական օրեր իր չուրջը գտնուած իրերը կ'տեսնէր այնպէս որպէս թէ հարթ մակերևոյթի վրայ լինէին: Բնաւ գաղափար չունէր առարկայից խորութեան և քանդակի վրայ: Գերմանացի բժիշկ Ֆրանց նոյն ակնարուժական գործողութիւնն ընելով կար կարող գործառորուհւոյ մը վրայ դիտեց թէ՝ այդ գործառորուհին որ կուրութեան ժամանակ սովորութեամբ վարժած էր առեղնադործութեան վերաբերեալ բոլոր գործիները կատարելապէս շարժել, այլ և չէր կարող գտնուիլ գործածել երբ աչքը բացուեցաւ: Այսմ կարելի է հետևցնել, որ տեսանելիքն մեզի շատ աննշան ծանօթութիւններ կ'տան, երբ մանաւանդ գաստիարակութեամբ ու սովորութեամբ չվարժին:

Այս օրինակներն անդամ մ'ևս կ'հաստատեն որ տեսանելիքը կ'կարօտին ստանալ կարգ մ'ըմբռնումներ վարժութեամբ: Դիտելի է նաև որ տեսանելիքն՝ միւս զգայարանաց պէս, կրնան խաբել մեզ, եթէ բանականութեան և փորձի միջոցաւ չուղղուին անոնց ստացած ծանօթութիւնները: Բանականութիւնը կ'ուղղէ գաւազանն զոր ջուրը կ'ծռէ:

Եթէ երկու չար սօսիներու երկայն ծառուղոյ մը վրայ կ'երևին մեզ այնպէս թէ հեռուն կ'միանան իրարու, եթէ հորիզոնին վրայ տեսնուած բլուրներ այնպէս կ'թուին մեզ որպէս

* Անգլիացի անուանի վիրաբոյժ (1688—1752). նա մանաւանդ հռչակաւոր իրև ակնաբոյժ՝ մեծ յաջողութեամբ կ'գործածէր իր արուեստն ի ծնէ կոյր մանկտին բուժելու:

*թէ երկնից կ'ղօրին, եթէ երկու նոյնածաւալ, այլ մին սպիտակ և միւսն սև քառակուսիներէն, սպիտակն աւելի մեծ կ'երևի մեզ, եթէ դիմահար ամպի մը յատակը դրամ մը դնելով՝ չկարենամ հեռուէն տեսնել, և եթէ վերջէն ջուր լեցնելով նոյն ամպին մէջ, դիտեմ որ դրամն կարծես թէ կ'բարձրանայ, և թէ հեռուէն չեմ կարող զանազանել դոյները, մանաւանդ կարմիր դոյնը, եթէ հիւանդութեան մը պատճառաւ, որ բաժնած է աչացս սառնակերպի կալերն, ֆերլէրի պէս տատներկու լուսնակներ տեսնեմ, երբ միայն մի հատ պարտ է տեսնել, կ'ըստիպուիմ եզրակացնել որ տեսանելիքն պարտին այնպիսի դասիարակութիւն մ'ընդունիլ որ մեզ չմոլորեցնէ, վասն զի փորձով պիտի հաստատուի թէ անհիմն են այս ամէն այլազան ծանօթութիւնները։

Տեսանելեաց յատուկ դասագրականն պէտք. — Ուստի հարկ անհրաժեշտ է մանկտւոյն տեսանելիքը կանոնաւէն կրթել։ Նախ կարևոր է ցոյց տալ անոնց դոյները, դնահատել տալ հեռակայութիւններն և առարկայից իսկական ձևն՝ որ կարծես մերթ կ'փոխուի հեռաւորութեան պատճառաւ (ինչպէս՝ կլոր կ'երևի հեռակայ քառաձև աշտարակ մը, լեռներու դերբուվներն կը հարթուին, տուներն իրարու կ'կցուին, երկուստեք երկաթուղոյն ճամբան քերող ծառերն կարծես թէ կ'խուսին)։ Այսպիսի իրողութիւններ պէտք է բացատրել տղոց։ Կարևոր է նաև մանկտին վարժել մի քանի խաղերու, ինչպէս դնդակի, թռուցիկի և այլն, որ ինչպէս կ'ըսեն, ակնարկի ուղղութիւն կ'տան։ Կրնան նաև երկրիս զանազան կողմերը դտնել, երկրաչափութեան տարրերն ուսանիլ արտերու վրայ ակնարկ մը նետելով, տեսանելիքի, նոյնպէս չօշափելիքի միջոցաւ կրնան ճանչնալ մի քանի մարմիններու մասնաւոր յատկութիւնները, յատկապէս մետաղներու, որոց հնչիւնն ու փայլիւնն տարբեր են։ Ի վերջ՝ տեսանելիքի օգնութեամբ կարելի է մանկանց սրտին մէջ զարգացնել գեղեցկի զգացումն ու ճաշակը՝ անոնց աչաց պարզելով արուեստի և բնութեան հրաշակերտները, և այսպէս ընդայարանաց դաստիարակութեան բարիքն ղրկել ընել։

Մանկավարժական եզրակացութիւն. — Զգայարանաց կրթութեան այս համառօտ ուսումնասիրութենէ կարելի է հանել մի քանի ընդհանուր եզրակացութիւններ։

ա) Մեր բոլոր զգայարանքը կրթութեամբ կ'զարգանան աւելի նուրբ, զիտուն ու ճարտար.

բ) Երբ մեր զղայարանքը կրթուին և զարգանան, կարող են տալ մեզի ծանօթութիւններ զոր չկրնար կարենալին հայթայթել եթէ իրենց նախնական վիճակին մէջ մնային.

գ) Ուրեմն կայ ու պարտի լինիլ զղայարանաց իրական դաստիարակութիւն մը։

Վ.

ՈՒՐՈՒԱԳԻՐ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ*

22· Նշանագանգուած կամ նշանաձաւալ ջրէ ծանրաթիւնն հաստատ է նոյն պայմաններու մէջ. — կայ· Խոռոչն. — Այժմ դնենք երկու նրբաչէն և աստիճանաւոր ապակեայ ամաններ երկու նըժարներու մէջ, այնպէս որ իրարու ճշդապէս հաւասարակշռեան։ Ապա՝ եթէ ի միայն կաթիլ մը ջուր դնենք չափերուն միոյն մէջ՝ նժարը պիտի իջնէ, եթէ կշռորդը լաւ չինուած է, ցոյց տալով որ կաթիլը ծանրութիւն ունի։ Եթէ երկու ապակեայ չափերուն աստիճանները հիւր են, ինչ որ լինի միոյն մէջ ղրուած ջրին զանգուածն, պէտք է որ միւսին մէջ ևս դրուի նոյն ջրին հաւասար զանգուածն որպէս զի լծակը հաւասարակշռի։ Այս լինքնայայտ ապացոյց մ՚է թէ ջրէ նոյն զանգուածն ի՛ և նոյն պարագայից ձեղ միշտ նոյն կշիռն ունի։

Արդէն ըսինք (18) թէ մարմիններն իրարու մօտենալու կըձգտին յարաբերական արագութեամբ § մը, որ խոտորնակի կըհամեմատի իրենց պարունակած նիւթին քանակութեան։ Բայց ինչպէս չափել պէտք է նիւթին քանակը։ Մինէ պէտք է չափել իր բռնած անդրպետին համեմատ, այսինքն իր ծաւալին նայելով, թէ ոչ պէտք է մարմնոյ մը նիւթին քանակը գնահատել իր ծանրութենէ։ Վերջին պիտի տեսնենք թէ ամեն մարմիններու ծաւալն չարունակ այլայլութեան մէջ են այն փոփո-

* Տե՛ս Հոկտեմբեր ամսագիր, երես 458։

§ Արագութիւնը կ՚չափուի որոշեալ ժամանակի մը մէջ մարմնոյ մ՚ընթացած հեռաւորութեան համեմատ։ Եթէ երկու մարմիններէ մին մէկ երկվայրկեանի մէջ տասնչափ մը կ՚քալէ, մինչդեռ միւսն երկու ոտք կ՚ընթանայ, այս վերջնոյն համեմատական արագութիւնն աւելի մեծ է։

խառնիներու համեմատ ալ կ'կրեն ուրիշ մարմիններու ճնշմամբ, նա մանաւանդ բարեխառնութեան փոփոխութիւններու համեմատ՝ որոց ենթակայ են. մինչդեռ մի և նոյն մարմնոյ կշիռն երկրի մակերևոյթի մի և նոյն կետին վրայ չփոխուիր երբէք: Ուստի կը հետևի թէ՝ կարող ենք մարմնոյ մը ծանրութիւնն առնուլ իբրև չափ անոր պարունակած նիւթին. հետևապէս ծանրութիւնը նոյնը մնալով՝ մարմնոյ մը ծաւալն որքան մեծ լինի, իր ծաւալին համեմատութեամբ նոյնքան նուազ նիւթ կ'պարունակէ, և ծաւալն որքան փոքր լինի, այնքան աւելի նիւթ կ'պարունակէ: Այդ ծանրութեան և ծաւալի մէջ եղած համեմատութիւնը կոչուի մեղ մարմնոյ մը խտութիւնը:

Երդ՝ ինչ որ ճշմարիտ է ջրի համար, է նաև բոլոր միւս մարմիններու կամ նիւթական իրերու համար: Ենթադրենք թէ ապակեայ չափերէն մին պարպելով տեղը դրինք, լծակն իր հաւասարակշիռ դիրքը պիտի կրնայ ստանալ կապարի կտորի մը միջոցաւ՝ որ կարուած է պէտք եղած մեծութեամբ: Այնուհետև կապարի կտորը պիտի տայ մեղ ծանրութիւն մ'որ ճշդիւ պիտի համապատասխանէ նոյնչափ ջրի: Երկաթի կամ պղինձի կտորներ՝ կապարին հաւասարաչափ, նոյնպէս համաչափ պիտի լինին ջրին ծանրութեան կամ կապարին, կամ մին միւսին: Բայց կապարի, երկաթի, պղինձի կտորներն շատ աւելի քիչ ծաւալ կամ ջանդուած պիտի ունենան քան ջուրն որու հաւասարակշիռ են: Ուրեմն կ'հետևի թէ այդ մետաղներու խտութիւնն կամ մի և նոյն ծաւալին մէջ պարունակած նիւթին քանակն շատ աւելի մեծ պիտի լինի քան թէ ջրի քանակին մէջ:

Ինչ որ կ'նշոյ կ'կոչենք առևտուրի մէջ կապարի, կամ երկաթի, կամ պղինձի կտորներ են որ բոլորովին համաչափ են ծանրութեան կողմէ ջրի որոշեալ ջանդուածի մը՝ որոշ պայմաններու մէջ: Այսպէս տաս լիտր կ'կշռէ ջրի կալոն մը և հետևապէս քսանը մէկ և քառորդ լիտր:

ՀԸՓՍԻԼԵՅ

ՏՆՏԵՍԱԴԻՏՈՒԹԻՒՆ*

Մալթուսեան. — Իր ծնունդը. — Մինչ ապրած է վախնալ մարդաշատութեան ամմանէն։

Վաղուց երկու իրարու ներհակ կարծիք կան այս մասին§։

Յունական քաղաքներու մէջ՝ ուր սահմանափակ էր միջոցը, փիլիսոփայ, քաղաքագէտ և օրէնսդիր կարծէին թէ քաղաքացւոց թիւոյն ամուսն չարիք մ'էր՝ զոր հարկ էր դարմանել այնպիսի միջոցներով որ մեղի սոսկում կ'պատճառեն։ Ի Հռոմ, ուր սակաւաթիւ էին մարդիկ, պատիւ կ'ընծայէին բազմաթիւ ընտանեաց և կ'պատժէին ամուրիութիւնը։

Տասնևեօթերորդ և ութերորդ դարուն՝ երբ գրեթէ ամեն տեղ բռնապետական կառավարութիւններն բազմամարդ դիւղեր ամայի կ'դարձնէին, կ'կարծուէր թէ սէրք էր ամեն կերպով մարդկային սեռի բազմապատկութեան նպաստել։ «Մարդաշատութիւնն միշտ բարիք մ'է», կ'ըսէ Մօնդէսքիէօ։ «Չկայ պետութեան մը համար յոռեգոյն սով քան մարդու սովը» կ'ըսէ Ռուսօ։

Ընդ հակառակն՝ Փէնէյ կ'ըսէր. «Աւելի սոխպողական է պարէնն բազմապատկել քան թէ մարդ իսկը», և չատ անտեսագէտներ Փէնէյի պէս կ'խորհին։ Բազմածնունդ ամուսնութիւններ մոատանջութիւն կ'պատճառէին, վասն զի սնուցանելու բերաններու թիւը կ'աւելցնէին, մինչդ եւ քաղաքագէտներ և երիտակալներ կ'ուրախանային ժողովրդեան ճմման վրայ, վասն զի զինուորներու թիւը կ'աւելնային։

Մալթիւս** որու անունն անլուծելի կերպով կապուած է

* Տե'ս Հոկտմբեր ամագիր, երես 398։

§ Բազմամարդութեան վրայ չէ թէ երկու, այլ չատ կարծիք կան։ կ'երևի թէ հեղինակն Պ. Թ. Ֆունք—Պրէնտանօ անտեսագիտին երկասիրութեան անտեղեակ է. գործ՝ որ մի չատ անտեսական ընդհանուած օրէնք և սեռութիւն վեր է վայր կ'շրջէ և մարդաշատութեան խնդիրն ևս տարբեր կերպով կ'բացատրէ, ինչպես վերջէն պիտի յայտնենք։ Ե. Խ.

** Թ. Ռ. Մալթիւս (1766—1834) անգլիացի անուանի անտեսագէտ, հռչակաւոր է իր նշան Տրբաղաղոսրեան սկզբունքն վրայ գործոյն, որ 1798ին լոյս տեսաւ, և այնքան վիճաբանութեանց դուռ մը բացաւ։

մեր ճառած խնդրոյն հետ, երկու խոշոր հատորներու մէջ արտայայտեց հետևեալ տեսութիւնը։ Մարդկային ազգն աւելնալու կ'ձկտի աւելի արագութեամբ քան թէ ուտեստը։ Մարդիկ կ'աւելնան երկրաչափական յառաջատութեան համեմատ, բազմապատկութեան դրութեամբ, հետևեալ թիւերուն պէս.

$$2\times2=4\times2=8\times2=16\times2=32\times2=64$$

Ընդ հակառակն ուտեստը կ'աւելնայ թուարանական յառաջատութեան համեմատ՝ յաւելման կանոնով, ինչպէս այս թիւերը.

$$2+1=3+1=4+1=5+1=6+1=7$$

Ուստի հաւասարակշռութիւնը կ'դադրի դոյանալէ սնանելի մարդոց և անոնց անհրաժեշտ ուտելեաց մէջ։ Եթէ յառաջատութեան այս երկու օրէնքն իրապէս չեն տեսնուիր, պատճառն այս է որ արգելիչ պարագաներ ժողովրդեան ճմման առաջը կ'առնուն։ Բայց այս արգելքներն են այն պատուհասներն որոց երեսէն մարդկութիւնը կ'տառապի. այսինքն՝ հիւանդութիւններ, սով, պատերազմ և մանաւանդ թշուառութիւնը։ Այս պատուհասներէ ղերծ մնալու միակ միջոցն է, ըստ Մալթիւսի, արդիւնել մարդաչատութեան ծայրայեղ աճումը՝ բարոյական բանաղծսիկ կանոններով։

Իսկ Ս. Միլ Թողով Մալթիւսի մաթեմատիքական բանաձևները, իր տեսութիւնն հետևեալ նախադատութեանց վերածեց, որ բանաւոր կ'երևին։

Մարդկային սեռն՝ երբ զլուխլի տիրապետութեան մը ներքև չգտնուիր՝ աւելնալու կ'ձկտի։ Իրաք՝ ժողովուրդ մը կ'կրկնապատկուի չրջանի մը մէջ որ մէն մի երկրի համար վոխվոխական է։ Միացեալ-Նահանգաց և Ճավայի համար այդ չրջանն չուրջ 30 տարի է, և 125է 9150 տարի է Ֆրանսայի համար։ Ամեն 10,000 բնակչի վրայ տարեկան աճումն է 26 հոգի ի Ֆրանսա, 98՝ ի Պելճիգա, 101՝ յԱնգլիա, 115՝ Գերմանիա և 260 Միացեալ-Նահանդաց մէջ։

Միւս կողմէ՝ ամեն երկրի և բոլոր աշխարհի մէջ հերկելի հողերն սահմանափակ են և սննդատու պարէնն զոր մէն մի հեկտար (10 հաղար մէդր քառակուսի) արտադրելու կարող է, տասնհման մը միայն կրնայ աւելնալ։

Մարդկան ճմման մէջ՝ որ անսահման է, և պարէնի ճմման մէջ, որ սահման ունի, վաղ կամ անագան հաւասարակշռութեան խանդարում մը տեղի պիտի ունենայ։

Այն ժամանակն՝ ուր հաւասարակշռութեան թերութիւնը սով պիտի պատճառէ, շատ հեռու է անշուշտ. բայց այս յետին թշուառութիւնը հասնելէն շատ առաջ, անտարակոյսելի հողէն հեռացեալ մշակական արտադրութիւններ պիտի պահանջուի և այդ ճանկռուն խնդրարկէն պիտի հետևի պարկեշտ գնոյն յաւելումն և տարերու մեծադոյն դժուարութիւն մը, որ առժամապէս չկրնայ նուազի եթէ ոչ մշակային ճարտարութեան կատարելագործութեամբ։

Շատ մտանշադիրներ այս տեսակ գուշակութիւնները ժխտեցին։ Ասոնց այդ հերքնակներուն ըրած առարկութիւնները.

ա) Նկատը, կ'ըսէ Ֆէրէյ, աւելի դիւրաւ կ'ստանայ ստորին մարմիններու ձևն քան վերին։ Ուստի շատ աւելի խոտեղէն և արմատներ պիտի դանուին երկրիս վրայ միշտ, քան թէ կովեր ու ոչխարներ, և աւելի կովեր ու ոչխարներ քան թէ մարդեր։

Սխալ է. բազմամարդ երկիրներու մէջ հիմակ իսկ բաւական միս չարտադրուիր որպէս զի ամեն մարդ կարող լինի գնել որքան որ առողջաբանութիւնը կ'պատուիրէ։

բ) Մարդաշատութեան առաւելութիւնն կ'յաւելու աշխատութեան արդիւնաւորութիւնն, վասն զի մարդս շատ աւելի դրամագլուխ կ'գործածէ։

Այս ատոյգ է. միայն դիտելի է որ խնդիրն ճարտարական արտադրութեանց վրայ չէ, այլ լոկ ուտեստի վրայ։ Հարիւր հակ ջուխայ չեն կարող անուցանել մանկիկ մը։

գ) Եթէ՝ կ'ըսէ Պ. Լըրու, Լիէպիկի նայելով, կ'հատուցանես երկրին ինչ որ անկից վոխ կ'առնես, կ'հաստատես ղջանն, այսինքն կենաց չջանակն ուսկից մարդկութիւնն կարող է միշտ գաղել իր կեանքը պահպանելու միջոցը։

Այս խորհուրդը պատուական է։ Հատուցանենք երկրին մինչև իսկ եւեղօք քան ինչ որ մեզ կ'տայ, անզործական բնութենէ առնուած ամեն արդասաւորութեան տարրներն անոր տալով, սակայն՝ եթէ չմիջէն աւելի պարար տանք, ցորենն կը հոսի ու կ'փախ։ Ասոնց սահմանը։

դ) Աշխարհիս մէջ որքան պարապ ու բեղմնաւոր վայրեր կան, ուր կարող են դաղթել բնակիչներն այն երկիրներէն ուր յետին ծայր հասած է մարդաշատութիւնը։ Հաւիւ եղած է որ մեր մոլորակին վրայ տասներկու երկիւթոն մարդկային էակներու համար լայն և ընդարձակ տեղեր կան, մինչդեռ հիմակ հազիւ մէկ ու կէս երկիւթոն կ'գտնուի։ Բաց ատոր՝ վաճառակա-

նութիւնն, որ հետզհետէ կ'ծաղկի և կ'աղատագրի, մեր հին աշխարհի կ'ըսէր՝ ամեցուն քանակութեամբ ամեն կոյս երկիրներու արտադրութիւնները։

Այս ամենը ճշմարիտ է, բայց չխաբուիր Ս. Միլի կողմէ ապացուցուած այն ճշմարտութիւնն թէ՝ եթէ բազմամարդութիւնն չարունակ աճի, պիտի գայ վայրկեան մ'ուր կատարեալ գոյն մշակական արհեստ չպիտի կարող լինի բաւական ննջատու պարէն արտադրել։ Սրդէն Ֆլանարա այս վիճակին ունի, ունենալով 100 հեկտարի համար 280 բնակիչ, և Ուտա, Հընդկաստանի մէջ, դրեթէ նոյնչափ խիտ բազմամարդութեամբ։

Մրթէ ասոր ճարը չկայ։ Մրթէ մարդիկ՝ երբ բազմանան, պիտի հարկադրին, ի չգոյէ ուտեստի, գիրար կլնել. և մարդկային ցեղն՝ պանծալի յառաջդիմութեան մ'անընդհատ ընթացից վախճանն հասած, պիտի ստիպուի վերադառնալ արդեօք այն վիճակին ուսկից սկսած է՝ մարդակերութեամբ։ Ո՛չ բնաւ. նա պիտի գտնէ իր փրկութիւնն ճշմարիտ յառաջդիմութեան մէջ, որ կարելի է ամփոփուիլ այս երեք բառերու մէջ. աւելի լոյս, աւելի առաքինութիւն, աւելի արդարութիւն։

Աւելի լոյս հոգւոյ կենաց դերիչխանութիւնը պիտի հաստատէ անասնային կենաց վրայ որ կ'գտնուի մարդու մէջ։

Աւելի առաքինութիւնն պիտի առաջնորդէ մարդկին մեծագոյն չափաւորութեան և հեռատեսութեան։

Ի վերջ՝ աւելի արդարութիւն՝ որ ամեն մէկուն պիտի ապահովէ իր աշխատութեան արդեանց լիուլի վայելումն, պիտի ընդհանրացնէ սեպհականութիւնն, փորձեալ դեղաթափ մեր սեռին բազմապատկութեան չափազանցութեան դէմ։

Ե՛Մ. ՏԷ ԼԱՎԼԷՑ

ԻՆՉՈ՞Ւ Կ'ԱՆՀԵՏԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ

Մեր արդէն յիշած անտեսագէտն՝ Պ. Ֆ. Պրէնդաօ, բոլորովին կ'մերժէ Մալթուսի դրութիւնն և տարբեր պատճառներու կ'վերագրէ ժողովրդոց նուազումն ու աճումը։

Ասոնիկ իր տեսութեան առիթով իմաստը։ Անհնին է ըսել որ մարդիկ կ'նուազին — վասն զի ուտեստն մարդկային ամման համեմատ չէ. վասն զի մարդիկ երկրաչափական և պարկեշտ թուաբանական համեմատութեամբ կ'աւելնան —։ Այս մալթուսեան օրէնքն բացարձակ է։ Բայց չկայ բացարձակ օրէնք

աշխարհի վրայ։ Մարթիւսի հետևած մեթոտով կարելի է հաստակ եզրակացութեան գալ։ Կարելի է ըսել թէ՝ ուտեստը սերունդէ սերունդ առաստանալով ծոխութեան և չայլութեան հետ, նոյն համեմատութեամբ կրնան աւելնալ նաև մոլութիւններ և հիւանդութիւններ և յառաջ բերել մարդկային տառապանք ու կործանումն։ Պատմութիւնը ցոյց կ'տայ որ ժողովուրդներն որքան հարստանան նոյնքան դիւրութեամբ պատերազմներու կ'մղուին, բարբ ու ճաշակ կ'ապականին, ուստի և մոլութիւններն կ'աւելնան և ընտանեկան պարտուց կատարումն չատ ծանր կ'դառնայ։ Շատ հին և նոր ժողովուրդներ, որ հարստութեան կատարն հասած են, կործանած են, մինչդեռ աղքատիկ ու թշուառ ժողովուրդներ զարգացման հասած, բազմացած են։ Ընդհանուր օրէնքի մը համեմատ՝ այս կարգի էակներու մէջ բազմանալու ձկտումն աւելի մեծ է քան թէ սնանելու դիւրութիւնը, բայց այս օրէնքն լոկ աննղաուութեան երևոյթին չպատկանիր, այլ ունի իր մէջ բազմազան տարրներ։ Որքան առատ լինի տեսակ մ'արարածներու համար ապրուստի միջոցներն, անօղուտ է, եթէ կլիման չնպաստեր, եթէ իրենց դանուած միջավայրն տկարութեան և անկման տարրներ կ'պարունակէ։

Հետևապէս որքան որ մարդուս էութիւնն կախումն ունի անուղէն, նոյնքան անուղը կախումն ունի իր էութենէ։ Հիւանդութիւններն, մոլութիւններն, ամուրիութիւնն, պատերազմներն չեն որ այդ երկու տարբեր աղեցութեանց մէջ զուգակիւռ կ'հաստատեն, այլ միայն մարդկային յառաջդիմութիւնն քաղաքակրթութեան մէջ։ Երբ աշխատութիւնը կատարելապէս համաձայնի ընտանեկան յառաջդիմութեան հետ, արտադրութիւնն ու մարդաշատութիւնը կ'աճի. այս համաձայնութիւնն որքան ուշ հաստատուի, նոյնքան չուտ կ'բազմանան աղքի աղքի պեղծութիւնք և տառապանք։ Սննդեան, պերճանաց և հարստութեան ծայրագոյն առատութիւնն աղտոց և ազանց անհետացման, սուվի, պատերազմի, կործանման պատճառ եղած են։

Արտադրութեան և ընտանեաց դաստիարակութեան մէջ անհամաձայնութիւնն ամեն երևակայելի միջոցներով կ'երևին մարդկային կենաց պատմութեան մէջ։ Ախտաբանութիւնը ցոյց կ'տայ որ ինչպէս թշուառութեան նոյնպէս հարստութեան յատուկ հիւանդութիւններ կան. բարոյագիտութիւնն կ'ապացու-

թանէ որ աղքատներու յատուկ մոլութիւններ կան, ինչպէս կան որ միայն հարուստներու կ'պատկանին։ Իսկ պատմութիւնը կը յայտնէ մեզի թէ ամուսնութենէ խորշումն կրնայ աղքատ ժողովրդեան մ'ամման պատճառ լինիլ, երբ ամուրի մասն անոր պատկառակութեան կ'նուիրուի, նոյնպէս կ'յայտնէ թէ ամուսնութեան ի քաջալերութիւն և պերճանաց ընդդէմ հաստատուած օրէնքն ունայն բաներ են երբ ազգ մը լոկ զուարճութեանց և չուայտութեանց մէջ թաղուած է, ինչպէս եղան երբեմն Հռոմայեցիք։ Ի վերջ պատմութիւնը կ'հաստատէ նաև թէ կան միաւորք պատերազմներ, ինչպէս կան ազէտաբեր պատերազմներ, թէ առաջիններն ժողովրդոց բարօրութեան յայտարար թուականներն են, իսկ երկրորդներն թշուառութեան ժամանակամիջոցներու յատուկ են։

Ուսոմ ուսեսոմ և բազմամարդութեան մէջ գտնուած յարաբերութիւններն չեն այնքան խորունկ որքան անոնք որ կը գտնուին սիրոյից մէջ։ Գանի աւելնան անհատական սպառման սիրոյքն առանց աւելնալու արտադրութեան արդիւնքն, այնքան մարդիկ նուազելու կ'ձկտին, ընտանեկան յարաբեր դրկանց ազգիւր մը լինելով։ ընդ հակառակն՝ արտադրութիւնն որքան ան՝ անհատական սիրոյից սպառումն չաւելնալով՝ նոյնքան մարդիկ կ'սկսին բազմանալ՝ ընտանեաց հաստատութիւնն ու ապրուստի միջոցներն հետզհետէ դիւրանալով։ Համերաշխութիւնն հաստատ է այս յարաբերութեան մէջ, և պատճառը միշտ մի և նոյնը։ Բարիկի բանուոր մը կ'սպառէ այնքան իրեր որքան որ կարելի է բազմաթիւ հնդկացի կամ չինացի ընտանիքներ կերակրել։ Միացեալ-Նահանգաց մէջ նոյն երևոյթը կը տեսնուի։ Աչխարհի ժողովրդոց մէջ Հիւսիսային Ամերիկացիք են որ ամենէ աւելի արագ չատցած են։ Ներկայ դարուս սկիզբն երեք միլիոն ժողովուրդն, այսօր չիսուն միլիոնի հասած է։ Իր գործաւորաց դասերն նիւթապէս զարգացած են ի չնորհս արդասաւոր հողի և ճարտարագործութեան, և անդաս հարստութիւն դիպած են, և սակայն Միացեալ-Նահանգաց մեծ քաղաքներու հարուստ ընտանիքներ կ'նուազին կամ կ'անհետին։ Ամուսնութեան ժամանակ զատկ չընենալու պատճառն և միջոցներ նորաձեւութիւն դարձած են անոնց մէջ։

Իրաւի՝ նշանակութեան արժանի են բազմամարդութեան վրայ այս նոր դիտողութիւններն և մէջ բերուած փաստերն Մալթուսեան բացարձակ տեսութիւնն ջրելու համար։ Այս բա-

նաւոր դիտողութիւններէ կարելի է եզրակացնել, թէ՝ մարդոց մտածին, անհեթեթ և ունայն պիտոյքն և այդ պիտոյքը գոհ ընելու համար ի գործ դրուած անբնական և ստէպ ապօրէն ու անիրաւ միջոցներն են ընդհանրապէս պատճառ ժողովրդոց նուազման և թէ չէ արտադրութեանց պակասութիւնն, թէ որքան ընտանեաց և ընկերական կենաց մէջ ի գործ դրուած ճգնդունք համակարգ ընթանան պիտոյից հետ նոյնքան ընտանեաց և ընկերութեան վիճակը կ'բարւոքի, կ'զարդանայ, և թէ՝ ընդհակառակն, ժողովուրդներն իրենց ընկերային ու տնտեսական յառաջացման մէջ որքան հարստութիւն դիզեն, անօգուտ են, քանի որ իրենց ոյժերը ցիր ու ցան կ'վատնեն և արտադրութեան միջոցները կ'սպառին. հետևապէս ազգային կործանման կ'հասնին՝ անդոդ դտնուելով յարդարելու իրենց իրենց ճգանց հետ և իրենց պիտոյքը:

Այս առթիւ՝ անպատեհ չէ ըսել, որ եթէ հայ ազգին նուաղման երևոյթները քննենք, մի և նոյն աղէտալի պատճառները պիտի դտնենք: Մէկ կողմէ հարստութիւնն՝ ստէպ ազգային և ընտանեկան շրջանէն հեռի՝ խոլական պիտոյից և նորելուկ քմահաճոյից գոհացման համար կ'սպառի, միւս կողմէ չքաւորութիւնն ու չտեսութիւնը կ'ձկտին հարստութեան, ճոխութեան ձևեր առնուլ: Ձգմարիտ, կարևոր և անմիջական պիտոյից գոհացման համար գործունէութիւնն և հնարագիտութիւնը չեն որ, ինչպէս տնտեսական, նոյնպէս ազգային և կրօնական իրաց կարգին մէջ պաշարած են հայ գլուխներ ու սիրտեր, այլ հինգ մի քաղաքակրթութեան չպարով փայլելու անզուսպ փափաքն է, ցուցամոլութեան և օտարամոլութեան, բաղդախնդրական ու ապօրէն միջոցներով ճոխութեան հասնելու տենչ մ'է որ առ հասարակ կ'վարեն մեր արդի անտեսական և ազգային գրեթէ աւեն գործառնութիւնները:

Եւ ինչու՞ զարմանանք երբ Հայոց ընտանեկան կապերն օրէ օր կ'քակտին, ազգային ու կրօնական հիմնարկութիւնները կը քայքային, հարստութեան աղբիւրները կ'ցամքին, թշուառութիւն և աղքատութիւնն ընդհանրապէս ընտանեաց մէջ կ'տիրեն, և հայութիւնն բազմանալու տեղ, հետզհետէ կ'նուազի, և ինչպէս մեր հողիներն ու միտքերը՝ նոյնպէս արդ ստացուր հողեր, ազգային անրաւ կալուածներ ու հարստութիւններ աւերակ կ'դառնան, քանի որ մեր բոլոր մտային ու բարոյական ոյժերն ընդունայն կ'վատնուին, քանի որ աւելի քմահճին պիտո-

յից գոհացման համար կ'դործածուին, քան թէ այն պիտոյից որ անհրաժեշտ են, որ սուիզդրական են, և որ մեզի մահ կ'ըսպառնան եթէ անտես առնուին։

ՏԱՏԵԱՆ

Տատեան հռչակաւոր ընտանիքը՝ իւր առ Ազգն և առ Օսմ. Կայսերական Կառավարութիւնն մատուցած բազմադիմի օդտաշատ ծառայութեամբ՝ մի քանի դարէ ի վեր հանրածանօթ է հասարակութեան, այս ընտանիքը՝ (որպէս անցեալ տարի դրեցինի ծանօթութիւն ունեցող տնձինք) բաւական հին է և ազդակցութիւն ունի Մինկրելիոյ իշխանական տան հետ։ Հանգուցեալ Սուլթան Սէլիմի օրով Յարութիւն վաչայի հաւը Հաճի Տատ ամիրայ իւր տաղանդով բաւական մեծադործութիւնները ընելով՝ Արքունի վառօդապետ կը կարդուի և այս բարձր պաշտօնը հետզհետէ կ'վարեն Յարութիւն վաչայի հօրեղբայրը՝ Սիմոն ամիրայ և մահուանէն վերջն ալ իւր որդիքը՝ Պօղոս և Յովհաննէս պէյերը։

Տատեան Յարութիւն վաչա Յովհաննէս պէյի որդին է, որ իւր նախնական ուսմունքն ի Պոլիս առնելով, հայերէն, տաճկերէն և դաղղիերէն լեղուները քաջապէս սովորելէ յետոյ, իւր հօր հետ ի Բարիզ երթալով Սէնթ Պարսլ, Լուի լը Կրան և Սօրպօն բարձրագոյն վարժարանները մտած և հոն բաւական ժամանակ աշխատած ու քննութիւն տալով առաջնակարդ վկայական առած և Կ. Պոլիս վերադարձած է։ Ատա նախ ի Բ. Դուռը, և ապա Ռուսիանութեան պաշտօնատունը պաշտօնավարելէ յետոյ՝ Ռուսիանիոյ քօմիսէր անուանուած և այդ պաշտօնով Ուլանեա դնացած է, յորմէ մի քանի տարի վերջ Բարիզի Օսմանեան դեսպանատան քարտուղարութիւնն ստանձնած և Բարիզէ վերադարձին Պետական Խորհրդոյ անդամ կարդուած է. ալ ասկից վերջը հետզհետէ անտառապ և հանքագ անօրէնի, եւմսից նախարարութեան օդնականի և վեցերորդ չրջանակի թաղավարութեան նախադահութեան պաշտօնները վարելով, վերջ

ջա պէս Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական անդամ էր. և թէև 1880ին հրաժարած, սակայն քիչ ատենէն վերջը դարձեալ նոյն պաշտօնին վրայ վերահաստատուելով՝ մինչև ցայսօր ամենայն յաջողութեամբ կը վարէ զայդ դժուար պաշտօն։

Տատեան Վսեմ. Յարութիւն փաշա՝ թէ Վ. Կ. Սուլթանին, թէ Նախարարաց և թէ օտար տէրութեանց առջև մեծ յարգու համարում ունենալով, իւր մատուցած բազմաթիւ ծառայութեանց առթիւ՝ բաւական ժամանակէ ի վեր յոյս կար որ Վեզիր-Ընեան (փաշա) աստիճան բարձրանար. այս չորեքշաբթի օր Եըլտըզի կայսերական պալատը կոչուած ըլլալով, երբ Վ. Կ. Սուլթանի հետ աշխատակցելու պատիւը կը վայելէր, Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ յայտնել Վսեմ. Յարութիւն փաշային, թէ շատ գոհ է իւր մատուցած ծառայութիւններէն և ի նշան իւր գոհունակութեան Վեզիրութեան աստիճան կը բարձրացնէ զինք։ Ակներև է թէ այս յանկարծակի հասնող կայսերական բարձրագոյն շնորհը քանի՛ երախտագիտութեամբ զեղջյց Նորին Վսեմութեան սիրտը, որ և իսկոյն երկրպագութիւն ընելով իւր շնորհակալութիւնն ու երախտապարտութեան զգացումները մատոյց յոտս Վ. Կ. Սուլթանին։ Իրիկուան դէմ կայսերական Իրատէն հաղորդուեցաւ Բ. Դրան և Նորին Վսեմութիւն դարձեալ Եըլտըզ երթալով պաշտօնապէս մատոյց իւր շնորհակալութիւնը. հինգշաբթի օրը մայրաքաղաքիս ամբողջ պաշտօնական մարմիններն ու օտար դեսպանք շնորհաւորեցին զՆորին Վսեմութիւն այս բարձրագոյն շնորհին արժանացմանն առթիւ։

Օսմանեան կառավարութեան մէջ աստիճաններու ծայրագոյնն է վեզիրութիւնը և անկից վեր ալ աստիճան մը չկայ. ցայժմ այս վեզիրութեան աստիճանին արժանացած են. Վսեմ. Նուպար փաշա՝ նախկին նախարարապետ Եգիպտոսի, Վսեմ. Աբրահամ փաշա Երամեան՝ անդամ Մերակուժի, Վսեմ. Յակոբ փաշա Գազազեան՝ նախարար կայսերական անձնական գանձուն և առժամեայ նախարար Ելևմտից, Վսեմ. Յարութիւն փաշա Տատեան՝ խորհրդական Արտաքին Գործոց նախարարութեան։

Նոբ–Դոբ

Ա. ՔՆԱՐ

Նախերգս էր յայուհք ճոպ իմ որրանի,
Մինչ ճոր ողջոյն տուի կենաց արեւի,
Մայրենի շրթանց հետ անդ սիրավառ
Հնչէիր ինձ դու՝ քաղցրադի՛ քընար:

Երբ այցել եկան ինձ զուարթ զարուններ
Վառէին ջինջ վարդ իմ կարմրուկ թուշեր,
Զարթուցիր յայնժամ հոգւոյս մէջ հրավառ
Անեղ սէր փառաց, ճո՛ւր, բո՛ց դու քընար:

Երբ կենաց ժխորին մէջն ես անցնէի
Ո՛ն լսեցի հիքին ողբերգն դառնաղի.
Անդ եաս ինձ տուիր արտօսր անդադար
Բռնկած աղեացս հետ տխրալա՛ր քընար:

Թէ երբ գլխիկոր ու մելամաղձիկ
Սեւ բաղդէս էի վարած ընկերիկ
Աղէկտուր գեղգեղդ յուզեց տխրաբար
Սիրտս ու հոգիս՝ սիրալա՛րժ քընար:

Թէ երբ ճնշէին աստ, անդ կուռ շղթայք
Ողբոց ձայնից հետ յարած ներդաշնակ
Ողորմ թելերով յիս յուզէիր յար
Գո՛ւր անճուռն սիրոյ, ոգեվա՛ռ քընար:

Երբ բնութեան ոսկի շողեր երկնայինն
Ինձ կայծ տային՝ կայծ՝ սիրոյ կենսածին,
Հոգւոյս մէջ բառած հաճոյքս զուարթարար
Ի ցուցց շարժէին քեզմով, ո՛ իմս քընար:

Ո՛ն դու ես միակ ինձ կենաց ընկեր,
Մտերիմ ցաւոցս եւ բէ զուարթ սրտիս սէր
Յանկամ քեզ հոգւովս վարիլ խանդավառ
Մինչ անբաժան ես ինձ՝ քաղցրի՛կ քընար:

Թ'այսմհետե չունչս հուր սպառի հառաչով
Լոյս աչացս մարմրի աննուն վշտերով
Ալ չ'պլպլան աստեղք քնաւ կենացս համար
Շիրմիս մէջ յայնժամ ո'ն, քնացուր զիս քնար:

Կ. Պոլիս, 13 Ց՛բ՛ 1887: ԱԴՈՒԱՐԴ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ՀԱՑՈՑ

Հեռո՛ւ, հեռուս երկրին քո բնիկ
վշտով աննուն, ողբաս մենիկ,
Եւ սիրաշունչ հառաչ ու բոց
Թաղես հոգւոյդ մէջ տխրակոծ
պանդո՛ւխտն հայոց:

Երկին անաստղ, խաւարազանգ
Չ'ունի այլ եւս կապոյտ երանգ,
Գլխուդ վերեւ գոռնդ գոռնդ ամպոց
Ծածկեն պատանք սեա՛ւ, բանձրաձո՛ծ
պանդո՛ւխտն հայոց:

Միջոցեռ հասնիս յեզր բաուխի
Անդ յոյս կենացդ պիտի սուզի,
Ի զուր սիրոյ բեւս լուսաբոց
Հիւսես ի բուխ յերկի՛րդ անրջոց
պանդո՛ւխտն հայոց:

Երբ դամբանաց զանգակք գանջեն
Մի նրժդեհի նոր մահն գուժեն,
Երկու համազգ արտօսրագօծ
Հազիւ զրկեն դագաղն ողբոց
պանդո՛ւխտն հայոց:

Այնպէ՛ս, անժամ, վաղամեռիկ
Կորնչի հայն՝ մէկիկ մէկիկ.
Այսպէ՛ս բաղուի անդ բիւրախոց
Ուր նետ գինք բաղդ դառն ցաւոց
պանդո՛ւխտն հայոց:

Ոգի՛ եւ զո՛ւր, դուք է՞րբ յուզէք
Հայոց սրտերն ո՛ւ, կարծրաբեկ,
Որ զանազիւժ կորստեան ի ծոց
Զըղիմէ ինք ձայն աղէկոծ
պանդո՛ւխտն հայոց:

Կ. Պոլիս, 13 Յունուար 1887:

ԱԴՈՒԱՐԴ

ՏՐՏՈՒՄ Է ՀՈԳԻՍ

Տրտում է հոգիս, աննման տրտում,
Ա՛խ ո՞րքան ցաւեր ունիմ այս սրտում,
Մաշում հալում եմ, կեանքիս բէլերը
Թունաւացնում սրտիս ազնիւ լարերը:

Լուսոյ շառաւիղ, գէթ մի կայծ լուսոյ
Թող սիւն տայ սրտիս եւ տեղիք լուսոյ,
Աշխարհիը պայծառ, իսկ սիրտ ի խաւար
Չկայ մի րոպէ որ լինի խաղաղ:

Այսօրուայ երգեր պատկառմ եմ քէզ,
Վաղը նոյն երգեր գերեզման քաշում.
Այսօր ստացար սիրոյ ծաղկանց դէզ
Վաղը դուն նոցա պէս ես քաշում:

Ո՞ւր է գնում սա, ուր բոլոր մարդիկ
Ո՞ւր է ծնում մանուկ, ինչո՞ւ զարգանում,
Եւ ինչո՞ւ համար յաղթութեան դափնիք.
Բռնակալ բնութիւնն մեզ ո՞ւր է տանում:

Օ՛հ, պատռուիր դուն սիրտ, ասա՛ աշխարհիս,
Թէ աննման է մօրից ծնուածիս
Ձըմարիտ է խօսքս լինել բախտաւոր,
Աշխարհն մանուկ մարդու սգաւոր:

Գեղեցկուհի

ՄՍՐՆԱՒ

ՄԱՆԿԻԿՆ Ի ԲՈՒՆ

Նըջե՛ մանկիկ, ի բուն անդորր եւ անոյշ,
Յօրորոցիդ՝ զերդ բոջընիկն յիւր բոյն քնքոյշ,
Ձեռներդ ի յանջ, գլխիկդ ի մի հակեալ կոյս,
Դիւթեալ երգովք մօր քո ոյր ես միակ յոյս:

Նըջե՛ մանկիկ, սնարիդ վերեւ քեզ հսկեն
Հրեշտակներ հոյաբեւեան երկնքին,
Ի բաց վանեն քո դժնդակ երազներ,
Զը վրդովել քո հանգստեան հեշտ ժամեր:

Նըջե՛ մանկիկ, բերեւարուիչ խօլ գեփիւռ
Կը սլանայ զգուել ճակատդ յուսասփիւռ.
Աչկուընքդ աղու գոհար ու վառ զոյգ մ'աստղեր,
Երբ կը բացուին, պարգեն երկնի՛ց վեհ պատկեր:

Ցերկնից իջած հեզ հրեշտակ մի ես դու,
Մխիթարիչ ըզկեր քո մօր վշտերու.
Վարդի կոկոն մ'ես կարմրորակ, նազելի,
Աստղերու շաղ մարգարտովն համակ լի:

Խաղաղ, անմեղ ու անվրդով քո հոգեակ,
Վշտի, սուգի եւ ցաւոց է անգիտակ,
Երանութեան ճիւս մ'է դեռ կեանք քեզ համար,
Շաղուած երգով ու խաղերով անհամար:

Անա գուարթ մի հեշտ ժպիտ ցոլանայ
Քո կիսաբաց եւ կարմրալար շրթանց վրայ,
Ձինչ շող արփւոյն խաղայ վարդին ի բերքեր,
Եւ պարգին դեմդ հանգոյն երկնից անստուեր:

Երանի՜կ քեզի, սէրովբէից հետ անշուշտ
Դուս պար բռնած հրճուիս, կայտռիս սիրտ ի բունդ,
Հրեշտակալար ոսկի քնարին գուգամայն
Կը նուագես անդադար երգ ի բերան:

Ննջե՛ դեռ եւս, ննջե՛ մանկիկդ անմեղուճակ,
Զը խռովիճ քոդ դեռ երազք քո ոսկեակ,
Ընդ ճոռոգ ճաշակն առնուս կեանքիս վշտաճար,
Երազե՛ եւթ՝ դա՛ռն ի գարթումն յայս աշխարհ:

Զմիւռնիա.

ՍՐԲՈՒՀԻ Խ. ՏԱՄԿԱՃԵԱՆ
Աշակերտուհի Հայկ. վարժարանի

ՄԱՀ ՊԱՏԱՆԻՈՅՆ

Մահն անգութ կորզեց կրկին,
Հինք հայութեան վարդերուն միւն:
Ազնիւ, ուշիմ, ուսումնագարդ,
Ազգին փայլուն յոյսն եղուարդ:
Տարիքդ հազիւ ննգետասան,
Բիւր խոստմամբ յի քո ապագան,
Մինչ խայտայիր ի մէջ կենաց,
Մահն իւր թակարդ յարեց յանկարծ:
Աւա՛դ, եղուարդ, մինչ ցաւակիր
Թերթիւր դուռ, մատեան ու գիր,
Մինչ դասերովդ յար մտագբաղ
Հոգ ու վիշտ դուռ սեպհիր խաղ,
Է՞ր երկնափայլ աչերդ ներհուն
Շուտ մարեցան, ընկար նկուն:
Ո՜ն, ո՞ւր գացին ջանքերդ անգին.
Ո՞ւր ուսածներդ, յոյսերդ վերջին.
Քո բարմաւետ բերքերն անկան
Տերեւներուն նըման աշնան,
Մարմինդ իջաւ ի գերեզման,
Դեռ գարդարուն ծաղկօք գարնան:
Ձակատագիր ի՜նչ ցաւալի,
Տէր, այս դժբաղդ մեր նայ ազգի.
Ծաղիկն ննձուի, փուշն մնայ,
Մարի յոյսն, ամպ ստուարանայ:

Զմիւռնիա.

ԼՈՒՍԻ Յ. ԹՈԳԱԹԼԵԱՆ
Աշակերտուհի Հայկ. վարժարանի

ՀԱՅ ԿԻՆԸ

Ցայսօր է թէ ռուս մեծանուն ուղևոր բժշկասէր Գ. Լէհսիեվ փոքր-Ասիոյ մէջ կատարած ուղևորութեան արդիւնքն դասախօսութեամբ ծանուցած էր Բեդրսպուրկի ռուս հասարակութեան։ Իւր վերջերորդ դասախօսութիւնն, որ հրատարակուած է Սեվէրնէյ Վէսթնիկի 10րդ թուոյն մէջ, կը վերաբերի հայ կնոջ։

Հայոց աղգը ցայց է տալիս մեծ սէր դէպի կրթութիւնը, մեծ ընդունակութիւն վաճառականութեան և արհեստների ծաղկեման սկզբնապատճառ լինելու։ Նա աչքաբաց է և բնական ըմբռնում։ և ահա այդ բոլոր յատկութիւններով է զանազանվում յոյնի աթոյեան հայը իւազաղ ճանապարհով Անատոլիայի զարգացման դործում։ Եւ յիրաւի չատ տեղ այդ վայելուչ երկրում չը կայ մէկ տուն, որ կառուցած չը լինի հայը, չը կայ մի տեղական կտոր, որ դործուած չը լինի հայի ձեռքով, չը կայ պտուղ, որ հայի այգուց դուրս եկած չը լինի։ Այդ բոլորի համար անկասկած, աչքառուստը և եռանդուն հայը չատ բանում պարտական է իւր գլխաւոր օդնական կնոջը։ Մինչ դործուեայ հայուհին ճչմարտասէս կարող է համարուել հայ աղգութեան գլխաւոր յենարանը։ Հայ կինը այն չափական է, որ սիրացնում և ամրապնդում է հայ դերդաստանը, ընդ նմին և հայ աղգութիւնը գլխովին։ Եթէ մի որ և իցէ տեղ կարելի է գլուխ նել անկարելուչ և ժրադլուխ կին, որ պահպանում է աղդայնութեան դաղափարը, իւր ցեղի յարատևութիւնը, անկասկած Արևելքում այդ արժանաւորագոյն կանանցից մէկն է հայ կինը։ Ցընթացս երկար դարերի դոյութեան կուռից, այդ ամուր և տկուն փոքրաթիւ աղգը կարողացել է յաղթող դուրս գալ հէնց այն պատճառով, որ նորա կեանքի ներցուկը եղել է տունն և գործունեայ հայ կինը, որ կարողացել է հաչտեցնել և միացնել միմեանց հետ հակառակութիւնն և ներքին խռովութիւնները սիրող հայերին։

Հայուհին աւելի պահպանելով դերդաստանի միութիւնը, ամուսնական անկողնու ւաքրութիւնն և ընտանեկան օջախի սըր-

բութիւնը, որոնով պահպանել է քրիստոնեան յաճախ մերձ եղած իր ազգի ամբողջութիւնը: Հայուհին գիշեր ցերեկ աշխատում է ինչպէս եղիամերութեամբ բարիք դիտող իւր ամուսնուն հաւասար, ընդ նմին ջանացել է և իւր ազգի համար, որի աշխատանքը չը թողնել Հայաստանը գոհ գնալու Քաղդէացւոց, Պարսից և այլոց: Անխոնջ աշխատասիրութիւնը հայուհու կեանքի անբաժան յատկանիշն է և գլխաւոր առաքինութիւններից մէկն, որի վերայ պէտք է կանգ առնենք՝ նորա դըրութիւնը նկարագրելու ժամանակ: Նա միշտ ոտի վերայ է՝ անխոնջ աշխատելու և միշտ զբաղուած առանին գործերով. կարելի է համարձակ ասել, որ աշխատանքը նորա ոսկէ ձեռքերից ցած չէ ընկնում: Ըստ երևոյթին այդ յարատև և տաժանելի աշխատանքը հայուհու համար ամենևին չունի այն սարսափելի ծանրութիւնը, որի տակ ճնշուած են ուրիշ ազգերի կանայք. դորա պատճառն այն է, որ այդ վերջին ազգերը կնոջ վերայ մեծ մասամբ նայում են իբրև մի աշխատաւոր գրաստի վերայ, որ պարտական է աշխատել միշտ իւր ընտանեաց և մեծ մասամբ բոլորովին գոտարկալորտ ամուսնու կարեաց բաւականութեան համար: Մինչդեռ հայուհին աշխատում է սիրով, որովհետև նորա ամուսինը ևս իւր ընտանեաց և տան համար աշխատում է ինչպէս եղ: Հայուհին, լինի նա աղքատ, հարուստ, ուսուցանած և թէ օրիորդ, բաց ի ծանր աշխատանքներից, զբաղվում է և արհեստներով, կարծես, հէնց նորա համար, որպէս զի իւր ժամանակը ի զուր չը կորցնէ և բաւականութիւն տայ իւր մշտապահանջ աշխատանաց ծարաւին: Ինչ որ հազնում է հայ ընտանիքը, ոչ միայն կարում է, այլ և պատրաստում է ինքը ջանասէր հայուհին. նա հաւասար ճարպիկութեամբ թէ կարում է, թէ ասղնում և թէ գործում. հայուհու գործած կոշտ և նուրբ կտաւը և մինչև անգամ բրդէ գործուածքները ոչ միայն բաւականացնում են հայ ընտանիքի պահանջները, այլ և առնվում և վաճառվում են օտար երկիրներում: Եւրոպական արհեստանոցների գործուածները, որոնք դուրս են քշել Արևելքի ձեռագործները, դժուարութեամբ են կարողանում մրցել հայ կնոջ ձեռագործների հետ, որովհետև հայ կինը արագ բում է թէ արագ, թէ ամուր և թէ արժան:

Հայուհին, բաց ի իւր ընտանիքի համար և այլ թեթևագին հագուստներ պատրաստելուց՝ վաճառելու համար, վէից, մեաքսից, բամբակից և բրդից պատրաստում է աւելի թանկա-

գին կտորներ։ Այդ գործուածքները, չը նայելով որ ձեռքով և նախնական գործիքներով են պատրաստվում, այնու ամենայնիւ իրանց արժանաւորութեամբ յետ չեն մնալ եւրոպական արհեստանոցների գործուածքներից։ Արևելքի այն գեղեցիկ արտադրութեանց շատերը, որոնք ի ցոյց են դրուած վայելչապէս մեր արևելեան կոչուած խանութների պատուհաններում, գործուած են Կովկասի, Պարսկաստանի և Անատոլիայի հայ կանանց ձեռքով։ Տրապիզոնի, Եզոկիայի, Վանի, Արզրումի, Բիթլիսի արտադրած նուրբ կտաւները, հիւսեալ շապիկները, թաւուտ երեսսրբիչները և սաւանները։ Խարբերդի այծի նուրբ մազից յայտնի գործուածները, պարսկական կոչուած գեղեցիկ և ամուր խալիները ու կապերտները որոնք զարմանք են պատճառում մարդուս իրանց բազմազան նկարներով և գոյների ճաշակաւոր յարմարութեամբ, Արզրումի երկարավիզ գուլպաները, որոնց վերայ, ինչպէս մաղաղաթի վերայ, կարելի է գրել, բերդից գործուած Վանի ամուր շալերը, որոնց կարելի է գործածել ճանապարհի համար իբրև անծրևից անթափանցելի ծածկոց, Խարբերդի բրդէ գործուածքները, որոնք համարեա իրանց նրբութեամբ, փայլով և գոյների գեղեցկութեամբ յետ չեն մնալ Լիոնի շալերից — ահա Արևելքի այդ բոլոր գործուածքները ըստ մեծի մասին Թուրքիոյ և Պարսկաստանի հայուհու ձեռաց գործն է։

Ա.Բ-Ե.Լ.

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆ

Ամեն նոր Պատրիարք որ պատրիարքական գահը կ'ելնէ՝ իր առաջին նուիրական պարտաւորութիւնը կ'համարի կոնդակ ուղղել առ ժողովուրդն։ Ուստի որքան նորընտիր Պատրիարքունք որ ունեցած է հայ Ազգն, նոյնքան անդրանիկ կոնդակներու կոյտ մը կ'գտնուի անշուշտ կեդրոնական դիւանատունն։ Այս կանդակային գրուածնուիրութիւնն զանազան տեսակէտով արժանի է ուսումնասիրութեան։ Ընտրակոյս ոճի ու ձևի տարբերութեամբ

միօրինակութիւնը պիտի լինի անանց էական յատկանիշն, անշուշտ Շնորհալւոյ Ընդհանրականն իրրև օրինակելի ասպար պիտի ծառայէ փոքր ի շատէ եկեղեցական դըպրութեան հմուտ Պատրիարքաց, բայց մէն մի կոնդակ պիտի կրէ նաև իր ժամանակին դրոշմն, պիտի ներշնչուի միջավայրի այլ և այլ պարագաներէ ու անձերէ, պիտի աղդուի ասիրող աղգային կամ օտար քաղաքականութենէ, պիտի բացատրէ աղգային վիճակին կրօնական, բարոյական և քաղաքական ու այլ հանգամանքն, պիտի ցոյց տայ աղգային յառաջդիմութեան պայմաններն, պիտի ներկայէ և այն դարմաններն որով կարելի պիտի լինի բուժել Աղգին երեսփոխանական, վարչային, ընտանեկան, եկեղեցական, տնտեսական, դրական և այլն հիւանդութիւններն և առատ հոգեշահ յորդորներ պիտի կարդայ առ ժողովուրդն խնասատութեան, արդարութեան, ճշմարտութեան և հաւատարմութեան շաւղին մէջ մնալ կամ յառաջանալ, և իր բոլոր այժերն ի նոյն նպատակ, այս է՝ Աղգին բարոյական, իմացական և մանաւանդ կրօնական վերաշինութեան համար ի գործ դնել։

Ներընտիր Ս. Պատրիարք, Ամեն. Տ. խորէն Աշըդեանի վառաւոր կոնդակն կարելի է հռչակել այս ամեն կէտերը չօշափող կոնդակներու հրաշակերտն, աղգային ընդհանուր ամպութեան մէջ՝ երկար ու հատուն խորհրդածութենէ չնորհիւ կանդնուած բարոյական բուրգն, ուր կ'յառնին արդէն արևակէզ և պատկառած հայ ժողովրդեան աչքունքը։ Չէ պատրիարքական կոնդակն գործ քարտուղարի կամ գիւանապետի, այլ Սուրբ Գրոց և հայ դըպրութեան հմուտ դրչի մ'ինքնագիր համազգի իրն, չէ այն, ինչպես ամանց Պատրիարքաց, պարզ պաշտօնագիր՝ թէ Աթոռոյդ անհատանելի կամքն Պատրիարք ընտրուած է, այլ պատգամագիր մ'է՝ իրրև Սինա Լեռէն արձակուած առ ոսկի հորթ պաշտող ժողովրդեան մ'ամեն կարգի, առաքինեան, առեսակի խիղճերու առեւանն, այլ ծայրագոյն կոչնագիր մ'է, որով կ'հրաւիրուին ամեն խիղճերն ձուլուելով սիրոյ և արդարութեան կաղապարին մէջ և ազգա-

յին վերաչինութեան գործն ի կատար հանել։

Արդարև՝ դէղեցիկ են Ա.մեն. Ս. Պատրիարքի հոգեշունչ և հայրական հրահանգները, ճշմարիտ են ընդհանրապէս իր դիտողութիւններն ազգային և եկեղեցական հիմնարկութեանց սխալը վիճակին վրայ, գովելի են իր ազգասիրական եռանդն և հանրօգուտ խորհուրդներն, սակայն այս ամենն՝ հրահանգ, դիտողութիւն, խորհուրդ և վասիաք կ'ըսեան, եթէ գործ ու արդիւնք յառաջ չբերեն։ Մեզ այնպէս կ'թուի որ Ա.մեն. Ս. Պատրիարքն ոչ միայն օրհնաբեր դէր, այլ իբրև պատրիարքական պաշտօնավարութեան ձեռնէր կ'ներկայէ հայ ժողովրդեան իր անդրանիկ կոնդակն, որու հիմնական կէտերը համաձայն են անշուշտ ազգային իրաւանց և շահուց։

Արդ՝ եկած գացած են Պատրիարքները որ իրենց անդրանիկ կոնդակն արձակելէն ետև՝ այնպէս կարծած են թէ՝ պատրիարքական պաշտօնին մի մասը կատարած են. դանուած են նաև այնպիսիներ որ իրենց խորհուրդներն հրապարակաւ արտայայտելէն ետև՝ բոլորովին հակառակն ի գործ դրած են։ Աւաջիններըը պարզապէս խաղալիկ եղած են դաս մը խորհրդականներու և իրենց կրօրական դէրքով մեծամեծ չարեաց տեղի տուած. երկրորդ կարգի Պատրիարքներն կրօնն իրենց վասնամբու-թեան պատուանդան ըրած, իրենց խիղճը ծախած են օտարին, և եկեղեցի ու ազգութիւն օտար քաղաքականութեան մատնած են։

Անշուշտ Ա.մեն. Տ. Խորէն Սրբազան չպատկանիր այս կարգի Պատրիարքաց։ Նա թէև լինդկնք անխոնջ և անկարող կ'գտանի առ համեստութեան, և իր յոյն Աստուածային Ջօրութեան վրայ կ'դնէ, սակայն դիտեն նաև որ այդ կրօնային բանաձև մ'է, սակայն արդէն յայտնի է, որ մի քանի փափուկ պարագայից մէջ ցոյց տուած է Նա որ եկեղեցական մը չէ պարտաւոր ճակատագրային վարդապետութեան հաւատալ, և թէ՝ լատադոյն քաղաքականութիւնն է բանականութեան և արդարութեան հրահանգաց հետևիլ և լուսաւոր կամք ի լոյս վանել

այն ամեն օտարոտի և նենդաժէտ թնդապրութիւններն որ մերթ ընդ մերթ իր ականջին պիտի հասնին։ Ամեն. Ս. Պատրիարքի եկեղեցական հմտութիւնն, անձնական և ազգային պատիւն և այն ծանր պատասխանատուութիւնը զոր պաշտօնին բերմամբ ստանձնած է, չպիտի թոյլատրեն անշուշտ գործել տալ իրեն ինչ որ հակառակ է իր կոչման, իր հեղինակութեան, իր համոզման, ինչ որ ազգային իրաւանց և գոյութեան կրնայ աղէտաբեր լինիլ, այլ լուսամիտ խորհրդով և անդրդուելի կամօք պիտի ջանայ նաև ջնջել այն կեղծմունքն ու բռնաբարմունքն որ մտած են Ազգին և Եկեղեցւոյն ծոցն իր նախորդին օրով և որոց վրայ՝ իր առաջին Ամենապատուութեամբ Մայր Եկեղեցւոյ բեմէն, այնքան լրջմտութեամբ և դարման բերելու տրամադրութեամբ խօսած է։

Անուքանալի է, որ Պատրիարք մը զանազան հովերու խաղալիկ և փոքրոգի կուսակցութեանց հլու գործի կամ ղեկ կ'դառնայ, երբ ինք չուղեր լինիլ ազգային մեծ կուսակցութեան պարագլուխն, այն կուսակցութեան որ ազգային բարեբագին չահուց գիտակցութիւնն ունի. երբ չունի հաստատ կամք ու արդարասէր բնաւորութիւն Սահմանադրութեան համաձայն գործելու, երբ ի վերջ չգ ծեր և չպարզեր պաշտօնական մարմնոց առջև այն պայմաններն որոց համեմատ միայն կ'յաջողի վարել ծանր ու փափուկ պաշտօն մը։ Այդ պայմաններն կ'ընդհնշմարուին թէև կոնդակաձև ծրագրին մէջ, այլ քաղցրոշ չեն։ Ամեն. Ս. Պատրիարքի համբաւաւոր արդարասիրութիւնն, եկեղեցասիրութիւնն և աղատասիրութիւնը վստահութիւն կ'ազդեն մերայնոց որ ևս քան զևս ի մօտուստ ուսումնասիրելէ ետև ազգային իսկական պիտոյքն և գինք չրջապատող ազդեցութիւնները, պիտի հաստատ կանգ առնու այն քաղաքականութեան մէջ որ ըստ ազգային է, որով կարելի պիտի լինի Ազգային Պատրիարքարանի և Բ. Դրան մէջ եղած թիւրիմացութիւնները բառնալ, դիւանագիտական ստացատիր խորհուրդներու և ցուցասիրական կամեութիւններու վերջ տալ, եկեղեցական իշխա-

նութեան բարոյական կացութիւնն, որ այնքան քայքայուած է, զօրացնել, կրթական, անտեսական և եւմտական հաստատութեանց հանրօգուտ միջոց մըն տալ, թէ եկեղեցական և թէ աշխարհական պաշտօնէից պարտաւորութիւններն ու իրաւասութեան սահմանները դնել և տիրող չիոմութեան և անիշխանութեան դարմանը դտնել, Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնը վերահաստատել, և յատուկ հոգատարութեամբ մշակել Օսմ. կառավարութեան և Ազգին յարաբերութիւններն որ վերջերս այնքան լարուած էին օտարոտի ձկտումներու և աղգաւեր խորհրդոց ու անօրինութեանց պատճառաւ։

Ընտարակոյս չէ այժմ պատրիարքական պաշտօնն ինչ որ էր երբեմն հեշտ ու դիւրաւար։ Ազգային, կրօնական և քաղաքական կենցաղներ, նախորդ սխալանաց արդիւնք, ընդհանրապէս անօգուտ և աշխարհասէր եկեղեցականութիւն մ'որ ազգային դարաւոր օրինաց և նուիրական շահուց սահմանէն դուրս ինքնուրոյն գործելու վարժած է և բարոյական պատասխանատուութեան թեթև դգայումն անգամ չունի, Ազգային կեդրոնական իշխանութեան դէմ ըմբոստութեան ոգի մ'որ յառաջ եկած է դաս մը դաւաճաէր, ինքնահաւան և օտարամոլ գործիչներու և միանգամայն այդ իշխանութեան ներքին անպատկառ վէճերու և անիրաւ ու հակասահմանադրական որոշումներու չնորհիւ, նա մանաւանդ ժողովրդեան գործող դասուն մերթ ցուցասիրական, մերթ անխորհուրդ ու սաթաժամ հակմանքն՝ որով կ'վտանգին իր իսկական շահերն և անտես կ'առնուի իր անհրաժեշտ պիտոյից զոհացումն, ընդհանուր վհատութիւնն, անտարբերութիւնն կամ չարտահրութիւնն որ կ'հետացնեն ազգային չրջանէն Ազգին արժանաւոր, բանիբուն, արդարասէր և գործօն անդամներն և շատ տեղեր բաց ասպարէզ կ'թողուն բազդախնդիր, չահամոլ և անարժան անհատներու, որ անբաւ չարիք կ'հասցնեն հայութեան, ի վերջ ժամանակիս բազմադիմի պահանջումներն որոց ասոիճանաւոր կատարմամբ կարելի է միայն քաղաքակիրթ ազգերու մէջ

պատուարները, յառաջադէմ և համակրելի կացութիւն մը ստանալ, ահա այս ամենն յետին ծայր դժուարացուցած են պաշտօն մ'որու կարևորադոյն ատորոգելին է վարել Թուրքիոյ Հայոց ճակատագիրն դէպ ի բարոյական և մըտային զարգացումն, և իր փրկարար ներդործութիւնը տարածել հեռաբնակ ազգայնոց մէջ որ բռնութեան ներքև կ'հնձեն և չեն վայելեր ազգային իշխանութեան և կրօնից սահմանին մէջ այն իրաւունքն ու արտօնութիւններն զոր Օսմանեան վեհապետք Սուլթանները յատուկ հրովարտակներով նուիրագործած են և զոր մեր արդի վեհափառ Դահակալին վեհանձն հովանւոյն ներքև պարտաւոր ենք անվթար պահել։

Անտարակոյս այնքան ծանր պարագայից մէջ գտնուող Պատրիարք մը չէ կարող սուղ ժամանակի մէջ ամեն ինչ բարեկարգել, չէ կարող կոնդակաւ մը մուծանել այն բարենորոգութիւնները՝ որոց կարօտ է Ազգն։ Այլ կ'յուսանք, որ՝ երբ հանդիսական օրերն անցնին, երբ պաշտօնական այցելութեանց դղրդիւնն դադրի, երբ վերջապէս Ամեն. Ս. Պատրիարքն Ազգին վստահութեամբը ընտրած՝ անվրդով ձեռք առնու ազգային կառավարութեանղեկն, պիտի սկսի դործի և անշուշտ պիտի պահէ Ազգին ակնկալութիւնը։

Եւ մեք իրրև խմբագիր՝ ինչպէս միշտ՝ ամեն կանխակալ ոգիէ ազատ՝ և լոկ ազգային հանրային օգուտն ի նկատի առնելով՝ քաղցր պարտաւորութիւն մը պիտի համարինք, երբ ազգային օրինաւոր վախճաններն ի կատար հասնին, հռչակել Ամեն. Աչքդեան Սրբազանի այդ վերաշինութեան արարքը։

ՅՈՒՐՔՆՏՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ձշմարիտը՝ ողբալի դրութեան մէջ է մեր բացառիկ կաթողիկոսը։ Բայասէրներն՝ թմրուկ ի ձեռին, կ՚հռչակէին և ցարդ կ՚ջանան հռչակել, ամեն ճշմարտութեան դէմ, թէ Մակար Սրբազան պիտի մուծանէ իր ապօրէն ընտրութիւնն և պիտի դրաւէ վերջապէս համայն Աղդին վստահութիւնն ու սէրն՝ անյողդողդ ընթացք մը բռնելով Աղդային Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութեան և Կովկասի Հայոց կրթական խնդրոյն ազդօգուտ կարգադրութեան մասին։ Կ՚հռչակէին և դեռ կ՚հռչակեն որ Ցարընտիրն անդուլ կ՚տքնի Աղդին բարւոյն համար, թէ շարունակ բողոքները կ՚ուղղէ առ Ռուս կառավարութիւնն, թէ իր բարոյական ազդեցութիւնն և հայրապետական իրաւասութիւնն ի սպառ պիտի չնչուին եթէ իր խնդիրն անլսելի մնան։

Արդ՝ Ցարընտրի տեսակցութիւնը Ռուսաց Վ.Կ. կայսեր հետ ակներև ցոյց տուաւ թէ որքան անհիմն են լուրերը այդ ձայներն և թէ որքան կ՚սիրեն խաբուիլ և Հայ ժողովուրդը խաբել այն թերթերն որ Մակար Սրբազանէն մեծամեծ օգուտներ կ՚ակնկալեն, և քիչ մ՚ևս զանի նահատակաց կարգը դասելու կ՚պատրաստուին։

Բայց թուրքիոյ Հայոց լրջամիտ մասն որ սովոր է հասատ չընծայել այնպիսի հրատարակութեանց որ նպատակ ունին ապօրէն ընտրութեան մ՚օրինաւորութեան դոյները տալ և դատաճանութեան վերագրել անձնուիրութեան և հայրենասիրութեան գործեր, մանաւանդ Կովկասի բոլոր Հայք՝ որ ի մօտուստ կ՚դիտեն և կ՚քննեն Հայոց կաթողիկոսութեան ցաւալի վիճակն, արդէն հաստատ համոզում մը կազմած են թէ ոչ մէկ կարելի է յուսալ եկեղեցականէ մ՚որ իր խղճին, իր ուխտին, իր կոչման հետ վաղուց ծախած է Հայաստանեայց Եկեղեցին Ռուսիոյ Տէրութեան։

Դէթ յուսալի էր որ Մակար Սրբազան Ցարին ի կովկաս ուղեւորութենէ օգուտ քաղելով՝ արտաքին ցոյց մը ընելու Ջանար, Ազգը պատուաւոր կերպով ներկայեր և մի քանի յոյժ կարեւոր խնդիրներու յաջող լուծումն ապահովէր։

Կովկասէն խմբագրութենաս հասած նամակներն՝ որ արժանահաւատ աղբիւրներէ կ'ըղխին, մի անգամ ևս կը հաստատեն թէ ինչ սաստիկ կացութեան մէջ ընկած է Հայոց կաթողիկոսութիւնն, և թէ ինչ ողորմելի դեր մը կատարած է Ցարընտիրն ի ներկայութեան Ռուսաց վեհ. Ցարին։ Մակար Սրբազան՝ աննման հարազատ կաթողիկոսաց որ Աղգին վստահութեամբ ու եկեղեցական բարձր հեղինակութեամբ զինուած՝ անվեհեր կ'պաշտպանէին Ռուսիոյ վեհապետներու առջև Հայաստանեայց Եկեղեցւոյ ինքնօրինութիւնն ու անկախութիւնը, չէ համարձակեր կամ չէ կարեր իր ծոյն ունեցած խնդրագիրն անգամ մատուցանել իր վեհապետին, որ անճամբ հարցուցեր է թէ արդեօք ունի վիշտ մը, խնդիր մը ներկայել, այլ միայն մի քանի աննշան բառեր թոթովեր է Հայոց կրօնն Ռուս ուսումնարանաց մէջ հայերէն և չէ թէ ռուսերէն դասախօսել տալու մասին, խնդիր՝ որ ուրիշ կենսական հարցերու մօտ մեծ նշանակութիւն մը չունի։ Այս սարսափական ընթացքն և ուրիշ անտեղութիւններ ոչ միայն մեծ տպաւորութիւն մ'են ըրեր կայսերական դերդաստանին վրայ, այլ և անհնարին վիշտ պատճառած են անխիղճ ամեն Հայոց, որ կ'փափաքէին տեսնել կաթողիկոս մ'Աղգին պատիւն ու ցաւերն արժանապէս ներկայացնելու կարող։ Բնապէս Ազգին ինքնասիրութիւնը կ'վիրաւորուի երբ իր օրինաւոր, նոյն իսկ Բոյոյէն կաթողիկոսն իրեն արժանավայել պատիւը չստանար. բայց ինչ կայ զարմանալի Մակար Սրբազանի այս կացութեան մէջ, քանի որ նա լռելեայն ընդունելու կանխաւ յանձն առած էր անշուշտ, ինչ որ կ'ընդունէ սորուկ պաշտօնեայ մ'իր գլխաւորէն, այս է արհամարհելի անտարբերութիւն մը, թէև գլխաւորապէս թերի մը, որ

ծոյլը ընկնող նաւաբեկեալին պէս տախտակի կտորի մը կ'փաթթուի, Մակար Սրբազանի ծննդեան և անպատիւ ծնանլն պատուարեր չարժառիթի մը կ'վերադրէ։ Թող այս ինքնախոր ներհատրութեամբ մխիթարուին անոնք որ դիշերն արև տեսնելու կ'յուսան, և յաւալի իրողութեանց առջև աչք գոցեն կամ անոնց անհեթեթ մեկնութիւններ տան, ճշմարտութիւնը կայ և կ'մնայ միշտ թէ՝ ինչպէս Մակար Սրբազան պիտի ծնայ Ազգին մէջ բացառիկ ու մինակ և պատմութեան մէջ ամայի, նոյնպէս պիտի ծնայ Ռուս կառավարութեան կամաց հլու և աննչան գործակատար *։

* Ա.յս այնքան ստոյգ է, որ Ռուս կառավարութիւնն կամ գրաչնութիւնը կ'արդիլէ տեղական հայ մամուլն բացատրելու Կովկասի Հայոց անհպատ տրամադրութիւնները ու տառնութիւնն դէպ ի Ցարընտիրն։ Իսկ երբ Թղթակից մը, ճշմարտութեան թարգման, կ'հաղորդէ Թուրքիոյ Հայոց Կովկասի Հայոց եկեղեցական և ազգային գործոց տխուր վիճակն, իսկոյն այդ Թղթակիցն փնտռելու փորձեր կ'լինին, ինչպէս որ մեր Թղթակիցն Պ. Հրաչ՝ իր մասին եղած հետաքրքրութիւնները արդէն գրած էր։ Մեզի՝ որ Օսմանեան Պետութեան շնորհած մամլոյ բանաւոր ազատութիւն մը կ'վայելենք, անմեկնելի կ'թուի այս ընթացքն և անարժան ահաւոր Պետութեան մ'որ մամլոյ մրմունջներն իրրև մեղուի մը բզզոցները պարտի նկատել։ Բայց Ռուսական իշխանութեան առջև չկայ անկարևոր բան. ամեն ինչ պարտի անցնիլ մաղէ. ամեն բան երևի ինչպես ինք կամի և չէ թէ ինչպես որ է իրօք։ Հետևապէս կ'ուզէ որ Կովկասի Հայոց ամեն ազգային գործերն նախանձելի հռչակուին՝ Թուրքիոյ Հայոց ի հրապոյր, կ'փափաքի որ հասարակաց կարծիքը չլուսաւորուի իրաց իսկական վիճակին վրայ, թէև թոյլ կ'տայ գոս մը վարձկան Հայ և ռուս օրագիրներու որ գրեն անարգել ինչ որ կամին Թուրքիոյ վրայ և ստէպ անիրաւ յարձակումներ ընեն։ Եւ սակայն Պ. Հրաչ ազգային գործոց սահմանին դուրս չելներ, քաղաքական խնդիրներու մէջ չմտներ, Ռուսիոյ իշխանութեանց դէմ ակնարկութիւն մ'իսկ չըներ, այլ պարզապէս կ'գրէ ինչ որ կ'տեսնէ, կ'քննէ ազգային հարցերու մասին։ Եւ Պ. Հրաչ՝ իրրև յանցաւոր կ'նկատուի՞, կ'փնտռուի՞ որ թերևս պատժուի՞։ Ի՞նչ անվայել ընթացք, որով մէ անգամ ևս կ'հաստատուի որ ճշմարիտ են գրածներն։ Ի՞նչ տարբերութիւն Օսմանեան վերանձնութեան, որ ճշմարտութենէ չխորշիր, և ռուսական բծախնդրութ՞ն, որ անոր ձայնը խեղդելու կ'նկրտի։

ԿՈՎԿԱՍԻՆ ՆԱՄԱԿ*

Հալածանք . . .

Ո՞ւմ դէմ, ինչի՞ դէմ, կարո՞ղ էք երևակայել։

Հալածանք՝ Ազգընտրին դէմ. հալածանք՝ Լևոն ԺԹ պապին գրուած Պապախանչին դէմ. հալածանք՝ Ազգընտրի կուսակիցների դէմ. . . ։ Հալածուում է Կառավարութիւնը, հալածուում է Ցարընտիր Մակարը, հալածուում է և Թեմիս Առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոսը. հալածուում են և մի երկու բաղդախնդիր ներ իրենց անձնական կեղտոտ շահերի համար։

Մինչև այժմ Թէև յայտնի էր, որ Թեմիս Առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոսը ամեն մի ներելի Թէ աններելի միջոցներով հալածուում էր «Նոր–Դար»ի խմբագիր Պ. Սպանդար Սպանդարեանցին, նորա աշխատակիցներին, բարեկամներին, մինչև իսկ ծանօթներին, բայց այդ նկատուում էր որպէս անձնական թըշնամութիւն։ Այսպէս օրինակ, նա երբէք որ և է պաշտօն չէր տալիս «Նոր–Դար» լրագրի հետ մի որ և իցէ կերպով կապ ունեցողին։ Ամեն տեղ իւր դործակալ պաշտօնեաների միջոցաւ խափանում է «Նոր–Դար»ի բաժանորդագրութիւնը, արգիլում է քահանաներին և առ հասարակ իւր Թեմի հոգևորականներին առանալ «Նոր–Դար»ը. հալածուում է անխնայ ամեն տեղ և ամեն կերպ . . . ։ Իսկ դրա հակառակ, «Մշակ» Թերթը՝ որ Կառավարութեան օրգանն է նկատուած այս տեղ, արժանացած է կոյր եպիսկոպոսի առանձին հովանաւորութեան և բարեկամական պաշտպանութեան, չնայելով, որ այդ «Մշակ» Թերթն էր, որ անխնայ հարուածեց հայ եկեղեցին, կրօնը, իրեն հռչակելով «անկրօն», «առանց եկեղեցու» և որի խմբագիրը ապրում է իւր մի սրտակից բարեկամից խլած օրինաւոր կնոջը հետ առ օրինի կապով . . . այդ Թերթն էր, որ հայ ուսումնարաններն ու վանքական կալուածները ձգտելով դէպի ռուս կառավարութեան՝ «անխնայ մտրակելու» պատճառանքով . . . ։ Ահա, ասում եմ, Արիստակէս Եպիսկոպոսը այցելելով անդադար «Մշակ»ի խմբա-

* *Այս նամակն՝ Թէև նախորդ նամակէն առաջ գրուած՝ ուշ հասնելուն խմբագրութեանս՝ արժան դատուեցաւ ներկայ ամսագրին մէջ հրատարակել։* Ս. Յ.

դրատուները, պաշտպանելով նրան, մի և նոյն ժամանակ հալածել սկսաւ «Նոր–Դար»ը որ պաշտպանում է «ազգային անկախ «եկեղեցի, ազգային անխառն լեզու և աւանդական օգտակար «սովորութիւններ, ընտանեկան սրբութիւն» և . . . մի խօսքով այն ամենը որ մեր դպրութեան յենակներն են. և այս հալածողը Հայոց եկեղեցու մի պաշտօնեայ, մի եպիսկոպոս է . . . : Է՛հ, այդ ամենն ասենք ոչինչ. մարդ ենք և ամենքս էլ սխալական, բայց Արիստակէս Եպիսկոպոսը նկատուած էր որպէս Ազգընտրի կուսակից և ամեն բան ներուում էր նրան: Բայց վերջերս բանը պարզուեց և երևեցաւ, որ նա հալածում է և Ամեն. Մելքիսեդեկին նոյն իսկ Մակար Սրբազանին դիւր գալու նպատակով . . . : Ահիթը Լևոն պապի կոնդակի պատասխանը դարձաւ:

Անցեալները «Նոր–Դար»ի մէջ մի լուր կարդացինք, թէ՝ Թեմիս Ս. Առաջնորդը չիմացաւ տուեց «Նոր–Դար»ի մէջ Ամեն. Մելքիսեդեկի Պատրիարքական հրատարակումը և զարմանք էր յայտնում, որ Հայոց եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեան միևնոյն ժամ և թիկունք լինելու եկեղեցու պաշտպաններին, ընդհակառակն, արգելք է լինում. . . :* Անցաւ մի քանի օր, եկաւ Յարընտիրը և ահա կրկին մի լուր կարդացինք «Նոր–Դար»ի մէջ, թէ Մակարը անյարմար է դատել Ամեն. Մելքիսեդեկի Պատրիարքին հրատարակումը «Նոր–Դար»ի մէջ. . . .§ ինչ է նշա-

* Ասասիկ «Նոր-Դար»ի 149 համարի մէջ այս մասին գրուածը. — Հակառակ խմբագրութեանս գործ դրած աշխատութեան, երեկուայ համարը չկարողացանք լոյս հանել, թէև համարը կազմ ու պատրաստ էր: Բայց ի բարեյաջողութիւններից, նիւթական ժամանակ կրելով հազիւ թէ կարողանում ենք սոյն կէս թերթը հրատարակել: Այս անգամ արգելքը թեմիս Ս. Առաջնորդի կողմից էր: Ցէնզուրական կանոնադրութեան մի յօդուածի համաձայն՝ կրօնական բովանդակութեամբ (Լևոն ԺԴ և Ամեն. Մելքիսեդեկի) գրութիւնների համար ցէնզուրական իշխանութիւնը սահմանուած առաջ հարկաւոր է, որ թեմական Առաջնորդը յայտնէ, որ Եկեղեցու դէմ ոչինչ չկայ: Մեր թեմի Ս. Առաջնորդը չկամեցաւ անել այդ՝ առարկելով, որ վհ. Կաթողիկոսին է վերաբերում այդ մասին մի որոշում տալը:

Շատ ցաւալի է, որ Հայաստանեայց Եկեղեցին պաշտպանելու դէպքում իսկ «Նոր-Դար»ը աջակցութեան փոխարէն խոչընդոտների է հանդիպում:

Ե. Խ.

§ Խմբագրութիւնից անկախ պատճառներով, սոյն համարը հրատարակւում է կէս թերթ. թեմիս Ս. Առաջնորդի տուած զեկուցման վրայ հիմնուած՝ բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը անյարմար գտաւ Պապի շրջաբերականի և Ամեն. Մելքիսեդեկի տուած պատասխանին հրատարակութիւնը «Նոր-Դար»ում. . . (1888 «Նոր-Դար» թ. 152):

նակում սա· մինչ Մակարականների աչքում Ազգընտիրն նոյն իսկ Հայ եկեղեցու պաշտօնեայ լինելուց դադարած է . . . կամ իր Պատրիարքին Հայ եկեղեցու հոգւոյն և օրինաց հակառակ է . . . :

Անցեալ ամսի, այսինքն Սեպտ· 10ին, Թեւիս Ս· Առաքնորդը Առաքնորդարանում ընդունում է 4—5 հոգու, «Արմաղան»ի և «Մշակ» կոչուած Թերթերի աշխատակիցներից, որոնք կանխօրէն Գեր· Առաքնորդի հետ պայմանաւորուած էին և տուրած իրենց անելիք առաջարկութեան մասին . . . : Նրանք Առաքնորդին ցոյց են տալիս (ձեւի համար) «Նոր–Դար»ի մի առաջնորդողը, որի մէջ խօսելով Պապի կոնդակի և Ազգընտրի պատասխանի մասին, յայտնում էր, որ միայն Ամեն· Մելքիսեդեկի նման Հայ եկեղեցուն հաւատարիմ զաւակը կարող էր այնքան դեղեցիկ արամարանութեամբ և հատընտիր ոճով պաշտպանել Հայոց եկեղեցին . . . : Պարոնները սկսում են բողոքել, թէ՝ Մենք կաթողիկոս ճանաչում ենք Մակարին և Հայոց եկեղեցին նա միայն կարող է պաշտպանել ընդհանուր վտանգի դէմ· ինչ կ'նշանակէ Ամեն· Մելքիսեդեկի մասին գրուածը· միթէ նա է Հայ եկեղեցու պետը· — Այո՛, պատասխանում է Արիստակէս Սրբազանը, իւրաքանչիւր եպիսկոպոս կարող է իր թեմում և պարտաւոր է պաշտպանել Եկեղեցին, իսկ ընդհանուր եկեղեցու թշնամու դէմ պէտք է կաթողիկոսը մաքառի· «Արարատ» ամսագրի գործն է այդ . . . » — Հարկաւոր է վերջ դնել Մելքիսեդեկի անուան պրոպագանդիաններին· խնդրում ենք խնդրամատոյց եղիք վեհ· Մակար կաթողիկոսին, որպէս զի «Նոր–Դար»ին դէմ զսպէ՝ եթէ չէ կարող բոլորովին լռեցնել» : Եւ ահա, որպէս հնուս հպատակ ծառայ Մակարին, Գեր· Արիստակէս Սրբազանը չտապում է կատարել 4—5 հոգու խնդիրը, որոց ինքն էր առաջուց ամեն բան սովորեցրել· . . . : Ճիշտ կոմէդիա :

Բնական է, որ Ցարընտիրը, որ ոչ մինչ ջանք չէ խնայում Ազգընտրի անունը մոռցնելու և եթէ կարելի է բոլորովին սպանելու համար, չէր կարող անտարբեր մնալ և դիտէր, թէ ինչպէս արդ արութեան անյաղթելի ճաճանչները սփռուում էին «սուրբերի» խնդրից յետոյ Հայոց եկեղեցականութեան ամենափառաւոր ներկայացուչչի հոգուց . . . կրակի վրայ իւղ աւելացրեց Գեր· Արիստակէսը, և Մակար Սրբազանը զայրացաւ, վրդովեց, գլուխը թափ տուեց և Ամեն· Մելքիսեդեկի Պատրիարքին արգիլեց . . . :

Բայց դրանով բանն աւելի ևս յայտնի կացաւ. ամեն օր խումբ-խումբ դիմում են «Նոր-Դար»ի խմբագրատունը* Պապոխեանին արտադրելու, կարդալու համար։ Ամեն. Մելքիսեդեկի անունն հնչում է բոլոր ժողովրդեան մէջ օրհնութեամբ... իսկ Ցարընտրի դէմ, Տէր Աստուած, ինչ...։

Տեսնում էք մեր թշնամին ո՞ր տեղից է։ Կառավարութիւնն իսօ թշնամի է ու թշնամի։ Մակար Սրբազանն արդէն իսկ իրերի բնական ընթացքով պէտք է թշնամի լինէր։ Թշնամի է «Մշակը՝ որպէս ռուսական կառավարութեան օրգան, հայութեան թշնամի, մանաւանդ որպէս հակառակորդ և նախանձորդ «Նոր-Դար» լրագրին, որ Ռուսիայում յարուց Ամեն. Մելքիսեդեկի կանդիդատութիւնն և յաղթանակը տարաւ և այժմ ամենատարածուած և ընդունուած թերթն է Հայոց մէջ և իւր շուրջն է խմբել Հայոց բոլոր ընտիր ոյժերը...։

«Գողը եթէ տանից լինի, հորթը փեղկից կ'տանին» ասում է ազգային առածը և իրաւունք ունի։

* * *

Սակայն Ցարընտիրն, որքան էլ աշխատի, կարող չէ ժողովուրդի ատելութիւնը մոռացնել։ Նրա պալատը դէպ ի Թիֆլիս մի նոր ապացոյց էր, թէ ինչ ատելութիւն է տածում դէպ ի նա հայ ժողովուրդը։ Դէպքն այնպէս բերեց, որ ես իմ անձնական դործերով դանուում էի Երևանում։ Կարծեմ Սեպ. 11-ին էր, որ Ցարընտիրը երեք-չորս եպիսկոպոսներով մտաւ քաղաք չորս կողմից պաշարուած կօզակների ստուար խումբով։ Դիմաւորել էին քաղաքի քահանաները, ուսուցիչներից մի քանիսը և աշակերտներ ու աշակերտուհիները, որոնք բոլորն էլ ստիպուած էին, որովհետև առաջնորդը Գեր. Սուքիաս եպիսկոպոսը, որ Մակարի ձեռնասունն է, կարգադրել էր այդպէս։ Բայց դրա փոխարէն ներկայ էին ռուս վարչականներ։ Ասում[1]

* «Նոր-Դար» կ'հարկադրի պատասխանել ամեն անոնց, որ կ'պահանջէն տպագրուած տեսնել Պապոխեանն։ — Միայն դուք չէք, որ ցանկանում էք լսեն պապկն՝ Ամեն. Մելքիսեդեկի տուած պատասխանը կարդալու։ Մի և նոյնը կամենում են շատ շատերը. գաւառներից էլ մեզ դրել են և ամեն օր ստանում ենք այդ մասին նամակներ։ Եթէ կամենում էք, մի մարդ ուղարկեցէք, թող արտադրէ Պօլսի մեր թղթակցից ստացած նամակից Ամենապատիւ Մելքիսեդեկի պատասխանը։ Մենք սիրով կ'տանք արտադրելու։ («Նոր-Դար» 154 համար)։ Ծ. խ.

Նուիրեալը խիստ հակոդուիւն էր առնում՝ վանենալով խառնուիւն բարձրանալուց: Միւս օրը, Սեպտ. 12ին ճաշ կար Նահանգապետի մօտ ի պատիւ Մակար Սրբազանի: Ներկայ էին ուս կառավարութեան պաշտօնեաները՝ Մակարի դէմ ու դէմ նստած: Բայց ոչ մի հայ իշխան կամ հասարակ մարդ չկար, չորս կողմն օտար . . . : Հրաւիրեալ հայերը՝ Մելիք Դանրամանեան իշխանն եայլն մերժել էին սեղանակից լինել Մակարին: Գլխաւոր Յարընաիրն վերադառնում է տուն և իւր բոլոր զայրոյթը թափում Սուքիաս Եպիսկոպոսի գլխին, որին ի պատիժ՝ չէ վերցնում հետը ի Թիֆլիս և թողնում է Երևանում, թէև կանխաւրէն ինքն էր կարդադրել, որ Սուքիասը իւր հետ լինի . . . : Ճանապարհ ընկաւ դէպ ի Դիլիջան մի գունդ կօզակներով: Դիլիջանում նոյնպէս պաշտօնական ընդունելութիւններ են լինում, և ոչ մի հայ մարդ չէ լինում . . . : Վերջապէս ժամանեց Թիֆլիս . . . : Գիտէք ով դիմաւորեց նրան, քաղաքի ոստիկանապետը և քաղաքագլուխը, նոյն իսկ նահանգապետի օգնականն անդամ չէր բաւեհաճել ընդառաջելու ամէնայն Հայոց Յաբընէէ Կաթողիկոսին . . . : Կառավարութեան կարգադրութեամբ 4—5 արհեստաւորների դրօշակներ և 15—30 հոգի հայեր՝ հոգևորականների հետ՝ հապիւ ուղեկից էին: Զնայելով որ ամբողջ քաղաքի բոլոր հայ եկեղեցիների զանգակները հրամայուած էր խփել և խփում էին անդադար, չնայելով որ տպուած յայտարարութիւններ էին ցրուել ամեն տեղ ժողովրդի մէջ Մակարի գալստեան մասին, բայց և այնպէս քաղաքի 45—50 հազար հայերից հապիւ 5—800 հոգի ներկայ լինէին աւագ եկեղեցու շուրջ, որոնց մեծ մասը հանդէս սիրող «Թամաշաճիներ էին . . . : Կիրակամուտք երեկոյեան և կիրակի օրը եկեղեցում հազիւ կարելի լինէր 100 հոգի հաշուել: Մակար Սրբազան անցնում է դատարկ տարածութիւնը . . . : Ժողովրդի այս սառն ընդունելութենէն աւելի ծանր, աւելի նշանակելի դաս մի կարելի էր տալ Յարընաիրի . . . որ սակայն երեւում է առոյգ, առողջ, լքուած, և որ հետևում է, ասում են, բժիշկների խորհուրդներին ամենամանր բաներին մէջ . . . :

16 Սեպտեմբեր 1833 ՀՐԱՏ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 27 Նոյեմբեր 1888

Բա՛ւեկամ, Իրաւի՝ ճիշտ դուշակեր էիր. վոլթորկէն եղք անդորրութիւն: Մրրկայի ծովը կ'խաղաղի երբ նորընծաի Պատրիարքն իր ուխտը կ'կատարէ և համբաւաւոր կոնդակը կ'արձակէ: Հայութիւնը գոյնդգոյն կ'չրջապատէ՝ իբրև ծիածան՝ նորել աբևն: Ամեն ուրեք ուխտանաներու աղաղակներ, խնդակցութեան կայթիւններ, մեծահաց սեղաններ, լեռնակոյտ խորտիկներ, փրփրալի բաժակներ կ'տեսնուին. մանաւանդ կարմրայտ և ծանրաքայլ եկեղեցականներ, թեթևառտն ժողովականներ՝ որ հանդիստ և երանաւէտ օրեր կ'վայելեն՝ ի չնորհս և ի պատիւ Ամեն. Խորէն Սրբազանի, անշուշտ նոր եռանդով և ուժով վերջ չէն ձեռն ի գործ դնելու համար:

Նորընտիր Պատրիարքի գահակալութիւնը բարեդուշակ կ'երեւի: Այն ինչ ողք կ'կոխէ Օսմանեան Ոստանն և ահա հմայուքեամբ կ'կանգնին իր առջև հոյակապ եկեղեցիներ ու վարժարաններ, և նոր չինութեանց ծրագիրներ կ'յօրինուին: Օծման հանդէսներ, խնջոյքներ և խրախճանութիւններ իրարու կ'յաջորդեն: Յակոբեան և Ունճեան բարերարներն օրուան դիւցազուններն են արդարև՝ և արժանի ամեն ազգային համակրութեան և երախտագիտութեան: Եթէ պատրիարքական գահակալութեան նախատօնակն այսքան փառաւոր հանդէսներով ու նուէրներով կ'կատարուի, չէ կարելի տարակուսիլ որ անոր աւարտանն որքան արդիւնաբեր և բեղմնաւոր դիհողութեամբ պիտի օրհնուի: Սակայն նորընտիր Ամեն. Պատրիարքն այս խընդակցական չարժումներու վրայ կ'նայի ժպտագին, կ'նայի այնպիսի մարդու մը պէս որ ուրիշ բան մը կ'փնտռէ, որ չդիպչարժ մեքենային չողին կ'նշմարէ և սուլումն կ'լսէ, այլ ոչ չարժումն: Ուստի կ'սպասէ որ չինդն դադրի, խորտիկներու մսխին հետ գլխի գոլորշիները ցրուին, որպէս զի իրական աշխարհն, հայութեան բուն ծոցը մտնէ և սկսի գննել ու քննել անոր կազմային դրութիւնը, հետազօտէ անոր ջղային ձգձգումներն և ապա կարևոր դարմաններն հղայ . . . :

Գիտես արդէն, Աստրիոյ Կայսեր դահակալութեան տարեդարձը կ'հաշակոսի, իր վերանձն հրամանին համեմատ, բարեբարական նուէրներով քան թէ փառասիրական ցոյցերով։ Մեր նորընտիր Պատրիարքն թերևս նոյն զգացմամբ պիտի հրամայէ որ առ յաւիտյս զինք սիրող հայն իր պարտքն առ Աղգն, առ Եկեղեցի և առ Պետութիւնն կատարէ արդեամբ և չէ թէ հանդէսներ կազմելով և ներկեներ արձակելով, որ չատ ունայն են կամ չատ աժան հիմա։

Եւ իրօք Ազգին պարտքն իր պիտոյից համեմատութեամբ օր ըստ օրէ կ'ծանրանան։ Խնդալ, պռոալ, կոնծել, առեներանել, մեծ մեծ ջարդել և Ազգին համար կ'զոհուիլ ըսելն չատ դիւրին բան է։ Կարևորն է գործել, անհրաժեշտն է իրական վորձերով ցոյց տալ որ չինելու աւելի հակամէտ ենք քան թէ քանդելու։

Մեր հին ու բնիկ հիմնարկութեանց և օրինաց քանդման առջև անտարբեր, ստէպ նոր հողի ու աւազի վրայ կանդնելու կ'ելնենք ինչ որ վաղանցուկ է։ Հասկանալի է երբ դուռդ անհատ մը իր հօրենական նիւթային ժառանգութեան կարևորութիւն չտալով՝ իր յատուկ գործունէութեամբ կ'չինէ իր տունն, իր անունն ու փառքն. բայց միթէ կարելի է երևակայել որ Ազգ մը իր նախնեաց դարաւոր աշխատութեամբ և արեան գնով կանգնած հաստատութեանց կործանման առջև անզգայ դիրք մը բռնէ, և ինքն օդային դղեակներ յօրինելու աենչով վարակի։ Ահա այսպիսի երևոյթ մը կ'ընծայէ Հայ ժողովուրդն։ Միթէ կարելի է ըսել որ ամերատուանութիւնը, նախանձն կամ թերևութիւնն է որ կ'մղէ զինք արհամարհել, ցրուել, քանդել ինչ որ սուրբ, նուիրական ու անգին է։ Անշուշտ մերթ ընդ մերթ երբ ժողովուրդներ անիրաւութեան և թշուառութեան հարուածներէ կաղամած կ'քանդեն ինչ որ անցեալն իրենց կատարած է բռնութեան և անօրէնութեան կոթողներ, արդարութեան գործ մը կ'կատարեն, սակայն երբ ժողովուրդ մը կ'աւերէ ու կ'կործանէ ինչ որ իր էութեան տարրներն են, թէև հին, չմարութեան ճամբուն մէջ ընկած կ'նկատուի։

Ինչպէսեմ, ունիմ պատճառներ այսպէս խօսելու, և այդ պատճառներն անծանօթ են միայն անոնց որ կործանման դործին մէջ կ'վիճառեն իրենց չահն։ Կ'փափաքիմ որ պարզեմ աչքիդ առջև այն աղէտքն ու տառապանքն որոց ներքև թէ հոգևորապէս և թէ նիւթապէս կ'հեծեծէ առ հասարակ Հայ ազգն,

մինչդեռ խրախճանութեանց և ճառախօսութեանց որոտմունքն կ'թնդացնեն միւս եզրն՝ ուր կեանքն կատակերգութեան ամեն երեւոյթներն ունի։

Եւ ահա երկու Պատրիարք ունինք մայրաքաղաքս։ Մին կ'ըլլ բօռռո, միւսը կ'խորհի. մին իր աթոռն մի քանի անխիղճ միաբաններու աւանդած է, միւսն իր աթոռին վրայ Աղգին վէրքերը բուժելու դարմանները պատրաստել կ'թուի...։ Եւ ինչո՞ւ Երուսաղէմի Պատրիարքն կ'դեգերի դեռ այս տեղ, ինչո՞ւ...։ Բայց այս մասին ուրիշ անգամ։

ՇԱՀՆՈՒՐ

ՀԱՆԴԷՍ

Ի Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ներկայ ամսոյս 27ին Ս. Մեսրոպեան վարժարանի վերաշինութեան երկրորդ տարեդարձը լինելով՝ Պատ. Ազատմնական Խորհրդոյ որոշմամբ՝ կիրակի առաւօտ՝ յետ ժամերգութեան, ի յիշատակ մեծանուն քարերար՝ Վ. սեմ. Յովհաննէս էֆ. Սպարդալեանի երախտագիտական հանդէս կատարուեցաւ՝ կանխաւ յայտարարելով Ազնուաչուք Տիկին Սրբուհի Սպարդալեանի և Վ. սեմ. Թագուոր և Սահիան Սպարդալեանի Պատ. Ազատմնական Խորհրդոյ որոշումն։

Ս. Մեսրոպեան վարժարանն դափիններով և օսմանեան դրօշակներով զարդարուած էր։ Ժամերգութեան աւարտումէն ետք՝ ըստ ծանուցման Արժ. Տեղապահ Հօր, դաս մ'աղգայինք հաւաճ էին արդէն հանդիսավայրն։ Սպարդալեան Վ. սեմ. Եղբարց կողմէ՝ փոխանորդաբար ներկայ կ'գտնուէր Մեծ. Կարապետ էֆ. Սպարդալեան, իսկ Ազնուաչուք Տիկին Սրբուհի Սպարդալեանի կողմէ՝ Մեծ. Վաղաբշակ էֆ. Կ. Ոսկանեան։ Արժ. Տեղապահ Հայրն՝ Տ. Յովհաննէս քահանայ Մինասեան և Պատարագիչ քահանայն Արժ. Տ. Պետրոս Մամիկոնեան երգեցիկ մանկանց դասէն չրջապատեալ ելան Ս. Մեսրոպեան վարժարանի սրահն, ուր հոգեւոր արարողութիւնն կատարուելէ ետև՝ Մեսրոպեան սանուներ ճառեր և ոտանաւորներ արտասանեցին, մի երախտագի-

տական ջերմ զգացմամբք, և բարեմաղթութեամբք վառն երկարութեան կենաց Սպարդալեան գերդաստանի. իսկ դպիրներն տխրաձայն երգեցին երգեր՝ ի յաւերժական յիշատակ վսեմ բարերարին որու անունն կրթութեան տարեդրութեանց և Ս. Մեսրոպեան սանուց սրտին մէջ ալիտի մնայ միշտ անմահ։ Նոյնպէս առ Վ.Հ. Սուլթանն ձօնեալ տաճկերէն տաղն երգուեցաւ եւս՝ Արժ. Տեղապահ Հայրն հանդէսը կնքեց օրհնելով Յովհաննէս էֆ. Սպարդալեանի անմոռաց յիշատակն, ինչպէս նաև Սպարդալեան գերդաստանի բոլոր անդամներն, և ջերմ մաղթանքներ կարդաց Վ.Հ. Սուլթանի անգին կենաց համար։

Հանդէսը պարզ, այլ սրտառուչ էր։ Կարծես թէ ազգ քոչ մը ծածկուած էր ամեն կողմն։ Սիրելի և հոգեշունչ անձնաւորութեանց բացակայութիւնն զգալի կ'երևէր և դառն ու ողբալի յիշատակներ կ'զարթուցանէր մտաց մէջ։

ՄԵՆ. ՅԱԿՈԲ ՎԱՐՊԵՏԵԱՆ

Վարպետեան գերդաստանն իր երկու ազնուաչուք անդամոց Ահարոն և Խաչատուր հարազատից մահուան սուգն ողբագին կրելու պահուն, նոր և զգալի կորուստ մը ևս կրեց հոկտեմբեր ամսուն 31ին՝ մահուամբ Մեծ. Յակոբ Վարպետեանի, ծերունազարդ գլուխն նոյն գերդաստանի։ Անգութ մահն որ անխնայ կ'հարուածէ ծաղկահասն ու ծերունին, աղքատն ու հարուստն, ամեն ընտանեկան և բժշկական խնամոց հակառակ, չխնայեց և Յակոբ աղան, որ իր արբուն և վաստակաբեկ հասակին մէջ պիտի վայելէր իր Ազնիւ Եղբարց և սիրասուն զաւակաց աշխատասիրութեան ու գործունէութեան արդիւնքը։ Նա որ իբրև այր գործօն և վաղուց հմուտ առևտրական արհեստին, նա որ հայր գործազուրկ և եղբայր սիրակարօտ, անհուն սիրով և անձանձիր ճարտարամտութեամբ հիմնեց Վարպետեան տունն և այդ տան պատուաբեր և ուսումնաղարդ շառաւիղները տուաւ, նա որ իբրև հայր նահապետական իր հովանւոյն ներքև ծաղկեցուց և չքացուց իր ընտանեկան շրջանն, նա որ իբրև հայ՝ ազգային ամեն բարենպատակ ձեռնարկներու մէջ չզլացաւ իր ե-

ռանդուն աջակցութիւնն, արժանի էր արդարև ապրիլ և տեսնել իր ցանած զեղեցիկ սերմերուն պտուղն և հրճուիլ ու պարծիլ, բայց Նախախնամութիւնն այլապէս տնօրինեց։

Յակոբ աղա Վարպետեան ընտանեսիրութեան և գործունէութեան տիպար մ'էր և ուսումնասիրութեան ու յառաջդիմութեան պաշտպան։ Դեռ ևս քաղաքիս հայ վաճառականութիւնն սահմանափակ չրջանի մէջ՝ ինքն առաջին անգամ յարաբերութիւն հաստատեց եւրոպական և յատկապէս անգլիական առևտրական տուներու հետ և նորանչան մղում մը տուաւ հայ գործունէութեան։ Հայ հասարակութիւնն իր գործօն անդամներէն մին, Վարպետեան գերդաստանն իր հիմնադիր և գորովալի պարագլուխը կորսյս արդարև մահուամբ Յակոբ աղայի։ Շքեղազարդ եղաւ իր յուղարկաւորութեան հանդէսն։ Իր հարազատ եղբարք և աշնուաչուք քորք, ինչպէս նաև բոլոր իր բազմաթիւ բարեկամներն արժանավայել յարգանօք իր յիշատակը պատուեցին։

Մխիթարել Վարպետեան վշտաբեկ գերդաստանն մարդկային կարողութենէ վեր է։ Գերմարդկային բարոյական արիութիւն և աչխարհային վաղանցուկ իրաց վրայ իմաստասիրական բարձր հայեաց մը կարևոր են տոկալու համար անբնդհատ հասնող հարուածոց։ Այս արիութիւնն ու իմաստասիրական ոգին կ'տեսնուին Վարպետեան հարազատից մէջ։ Անտարակոյս եթէ կայ մխիթարելի տեսարան մը ընտանեաց վշտահար անդամոց համար, այն հաստատ յոյսն է, որ իրենց ընտանեկան և ազգային պարտաւորութեանց մէջ կ'գտնուին անթերի, թէ կ'կըրճեն և կ'հրահանգեն հայութեան մէջ յուսատու ընծիր պատկներ և կ'աւանդեն Ազգին ընտանեկան սիրոյ, ազգասիրութեան և գործունէութեան օրինակներ։ Արդէն Գ. Միհրան՝ Յակոբ աղայի անդրանիկ որդին, մեր քաջուշիմ և աշնուախոհ աչակերտն՝ պարծանքն սլիտի լինի իր հօրեղբօր և հօրաքեռ որդւոց հետ թէ իր գերդաստանին և թէ Ազգին՝ իր ընծիր բարեմասնութեամբք և հայկական դաստիարակութեամբ։ Ուստի իր հարազատից և գաւակաց սրտին մէջ սլիտի ապրի միշտ Յակոբ Աղա Վարպետեան։

ՄԿՐՏԻՉ ԼՖԼՆՏԻ ՀԱԼԷՊԼԵԱՆ

Հոկտեմբեր 1ին տակաւին առօտ՝ այսինքն 48 տարուան հասակի մէջ յանկարծամահ կը վախճանէր յարդի անձ մը, առաքինի հոգի մը, ի լոր սուգ համակելով իր բոլոր գերդաստանն՝ որ այդ դառն կորուստը կ՚ողբայ իրաւամբ։

Աչխարհէ հրաժեշտ առուղ այդ անձը՝ մեր պատուական քաղաքակիցը՝ ՄԿՐՏԻՉ ԼՖԼՆՏԻ ՀԱԼԷՊԼԵԱՆՆ է։

Լաւ քաղաքացի մ՚էր նա, ընտիր և առաքինի մարդ, անբասպիտ ամուսին, զաւակասէր հայր և պատուական ընկեր. բարեմասնութիւնք՝ զոր ամեն Իզմիրցի Հայ միաւորուած կը տեսնէր ի նա։ Բարեմիտեան իրր ճշմարիտ ախտար մը՝ նա փոխաքաղ էր ամենուն լաւութեան. ոչ ոք ցաւած կամ վշտացած էր երբէք իրմէ։ Իր այս աղնիւ յատկութեանց համար ամենուն սիրելի եղած՝ կրնանք ըսել թէ իր մահը ընդհանուր վիշտ պատճառեց։ Մեռաւ նա մէկ վայրկեանի մէջ, իր սիրուն ընտանեաց դիրկը, առանց որ և է ֆիզիզական ցաւի, անզգալի անցում մ՚ընելով կեանքէ դէպ ի մահ, կարծես թէ արդարի մը մահն էր այն։

Հանգուցեալը կը թողու դորովալիր և անմխիթար ամուսին մը, և երկու սիրուն մատաղատի որդիներ ընտիր ձիրքերով օժտեալ՝ որք իրենց ապագային նկատմամբ արդէն մեծամեծ յոյսեր կը ներշնչեն։ Այս կրկին հզնալ չառաւ իղձերն իրենց հայրն արժանապէս պիտի ներկայացնեն աչխարհի վրայ՝ ուր կը թողու նա անուն մ՚այնքան ջինջ, այնքան անարատ։

* * *

ԼՐԱԳՐԱՂ

Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք ի կայսերական Պալատ. — Ընդունիր Պատրիարք Ամեն. Տ. Խորէն Արքեպս. ամբոյս ցնծի պատիւ ունենդիր և ներկայանալու վեհափառ Սուլթանին, մեծաշուք հանդիսաւորութեամբ և շքեղութեամբ։ Ս. Պատրիարքն իւր ուղեկիցներով եղաւ Պալատը

ժամանելով՝ ընդունուեր է արարողապետ Միւնիր փաշայի կողմէ որ՝ քառորդ ժամու հանգստե յետոյ՝ վ. կ. Սուլթանին հրամանաւ հրաւիրեր զՊատրիարք Հայրն, Գեր. Նար-Պէյ և Սէֆէրեան Սրբազանները, վ. սեմ. Սիմոն պէյ Մագասուեանն և Գործակատար Աբրահամ էֆէնտին՝ Ն. Կ. վ. կ. փափաքութեան ներկայանալու։ Ընդունելութիւնը տեղի ունեցեր է Կայսերական Զիթի քէօշկին մէջ ուր Ամեն. Տ. Խորէն Պատրիարքն կարդացեր է տաճկերէն լեզուաւ ուղերձ մը առ վ. կ. կայսրն, յորում Ն. Սրբազնութիւն պատշաճ բանիւք յայտներ է իւր շնորհակալութիւնն և երախտագիտութիւնն և հայ ազգին հաւատարմական ու անձնուիրական զգացումներն, և վերջացուցեր է՝ ջերմ բարեմաղթութիւններ ընելով վասն կենաց, բարօրութեան և յաջողութեան Օգոստափառ Ինքնակալին։ վ. կ. Սուլթանն հաճեր է պատասխանել Ս. Պատրիարքի ուղերձին, գոհանակութիւն ցոյց տալով նորա ընտրութենէն և միանգամայն յայտնելով որ հայ հպատակներն կ'ակնկալէ բարւոք ծառայութիւն և հաւատարմութիւն առ Օամ. Պետութիւնն։ Կայսերական դահլիճն եղեալ յետոյ արարողապետ Միւնիր փաշա իւր ձեռօք Ս. Պատրիարք չոր կուրծքէն կախեր է առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշանն ղոր վ. կ. Սուլթանը բարեհաճած էր շնորհել Ն. Ամենապատուութեան։ Նոյնպէս արարողապետ փաշան՝ Նար-Պէյ Սրբազանի յոյնձներ է երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան և Սիմէոն Սրբազանի Բ. կարգի Մէճիտիյէ. իսկ Սիմոն պէյի ծանուցեր է թէ Ն. վ. կ. փափաքութիւն բարեհաճած է պալատի բարձր աստիճանաւ պատուել զՆ. վսեմութիւն։ թէ՛ Ս. Պատրիարք Հայրն և թէ Նար-Պէյ և Սէֆէրեան Սրբազանք յոտնկայս կրկին բարեմաղթութիւնները ըրեր են վասն կենաց և բարօրութեան Օգոստափառ Սուլթանին և շնորհակալութեան ջերմ արտայայտութիւններով կայս. Պալատէն մեկներ են իրենց ուղեկցաց հետ՝ հանդիսաւոր կերպիւ և Բ. Դուռը երթալով՝ Ս. Պատրիարքն իւր պաշտօնական առաջին այցելութիւնն տուեր է բարձր. Մեծ Եպարքոսին և Նախարարաց։ Նոյնպէս վսեմ. Աբրահամ էֆէնտի Ֆրէնկեան Իւլլույի երկրորդ տասեճանին արժանացած է՝ կայսերական հրամանաւ։

Հանդէսք եկեղեցական օծմանց. — Ներկայ ամսոյս 13ին կիրակի օր ի Պոլիս մեծաւ հանդիսիւ կատարուեր է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ նորոգեալ մասանց օծումը, ի ներկայութեան ամէն դասակարգի պատկառող ժողովրդեան յոգնախառն բաղմութեան և բարձրաստիճան եկեղեցականաց ու աշխարհականաց։ Օծման արարողութիւնն կատարեր է Երուսաղէմի Պատրիարք Տ. Ցարութիւն Սրբազան որ քարոզ խօսեր է։ Եկեղեցական արարողութիւններէն յետոյ Աղգ. ժողովոյ յատկացեալ նորակառոյց ընդարձակ սրահին մէջ շքեղ սեղան մը տրուեր է որուն նախագահեր է Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրն. սեղանին վրայ բանախօսութիւններ եղեր են եկեղեցական և աշխարհական անձանց կողմէ։

Նոյնպէս ամսոյս 18-20ին կատարուեր է Սկիւտարի վերանորոգեալ Ս. կարապետ եկեղեցւոյ օծման արարողութիւնն, ձեռամբ երկուց Ս. Պատրիարքաց և խրիմեան Հայրիկի, և ի ներկայութեան երկսեռ մեծ բաղմութեան մը։ Սոյն հանդիսին ներկայ են եղեր՝ ի մէջ այլոց՝ Սկիւտարի կառավարիչ վ. սեմ. Պահրի փաշայ, Գատղիւղի քաղաքապետ վ. սեմ. Մաշուգ պէյ և Պահրի փաշայի եղբայրը՝ ժանտարմայից դնդապետ Իսրահիմ պէյ, բազմա-

թիւ եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք և երևելի անձինք։ Վ. Հ. պետական Սրբազան քարող խօսելով դրուատեր է Վսեմ. Ռուենճեան երկու հարազատաց քրիստոնէական և ազգասիրական բարեգործութիւնն որով ինքնայորդոր առանձնած էին հրկեզեալ եկեղեցւոյ վերանորոգման գործն։ Յետ եկեղեցական արարողութեան Վսեմ. Աբիկ էֆ. Ռուենճեան շքեղ հացկերոյթ տուեր է եկեղեցական և աշխարհական հրաւիրելոց, և բանախօսութիւնք եղեր են սեղանակցաց կողմէ, ընդ որս նաև Վսեմ. Պահրի փաշա, և Ջերմ բարեմաղթութիւներ՝ վասն կենաց և քարօրութեան Վ. Հ. Սուլթանին։

Կարապետ Էֆ. Գազազեան, եղբայր Գազազեան Վսեմ. Յակոբ փաշայի, ամբոյս սկիզբն իր մահկանացուն կնքելով՝ յուղարկաւորութիւնը կատարուեր է փառաւոր հանդիսիւ որուն ներկայ գտնուեր են՝ բաց ի ականաւոր անձերէ՝ պետական բարձրաստիճան թուրք պաշտօնատորք և այլ երևելի օտարազգիք։ Հանգուցելոյն մարմինն ամփոփուեր է Շիշլիի գերեզմանատան մէջ։ Կարապետ Էֆ. Գազազեան բարեմիտ և հեզահամբոյր բնաւորութեան և ազնիւ սրտի տէր՝ գործունեայ և աշխատասէր անձ մ'եր, ուստի իր մահն մեծ ցաւ ազդած է ամեն դիմք ճանչցող անձանց։ Մխիթարութիւն կ'մաղթենք հանգուցելոյն սգակիր Ընտանեաց։

Պօղոս Ագգ. Պատրիարքարանը վերաշինելու մասին Քաղ. ժողովոյ Գեր-Ադմնապետ Վսեմ. Էյիաս էֆ. Զայեան նոյն ժողովոյ ներկայացուցիչ է կարևոր առաջարկ մը, որով կ'առաջարկէ ներկայ խարխուլ շէնքին բուլորիքը գտնուած քանի մը տուներն և գետինը ծախու առնելու համար պէտք եղած 1000 ոսկւոյ գումարը հանգանակութեամբ հաւաքելու. արտօնութիւն տալ և մանաւանդ մը կազմել՝ այս մասին պէտք եղած տնօրինութիւնն ընելու և շէնքին յատակագիծն պատրաստելու։ — Ցոյժ գոհացուցիչ է այս կարևոր առաջարկին Ս. Բոլսոյ Էջեր, և իսիւ թէ գոնէ այս անգամ գործադրութեան սահմանին մէջ մնէ մինչ որ փափաքելի է ազգային արժանապատուութիւն կրող ամեն ազգայնոց։

Նուպարեան բառաբան։ — խնդութեամբ կ'իմանամք, որ Նուպարեան ֆրանսերէն աշխարհիկ բառագրքի տպագրութիւնն սկսած է ի Պազտատլեան տպարան՝ ընդ հսկողութեամբ գրագիտաց յանձնաժողովոյ մ'որ յատկապէս կազմուած է ոչ միայն այս կարևոր գործին տպագրութիւնն ի կատար հանելու, այլ և բաժանորդներ գտնելու։ Յաջողութիւն կը մաղթենք։

Ընտրողական ժողով։ — ինչպէս յայտնի է Ջմիւռնիոյ Գաւառական ժողովը բեկանելով՝ իբրև ապօրէն, նախորդ երեսփոխանական ընտրութիւնն ներն, որոշեց ծանուցանել տեղւոյս վարչութեան նոր ընտրողական ժողով կազմել և ընտրութեանց գործը կատարել։ Ընդ. ժողովին՝ ըստ որոշման Գաւառ. ժողովոյ՝ նոր Ընտրողական ժողովը կազմեց, որու անդամներն են;

Մեծ. Կարապետ էֆ. Արապեան, Մեծ. Աբեհիս էֆ. Աբեհիքեան,
» Ղուկաս » Էսայեան » Յարութիւն » Իփլիկճեան.

Այս նորակազմ Ընտրող. ժողովը արդէն մի քանի նիստ կազմելով՝ պետական պատրաստութեանց համար, ըստ Սահմանադրութեան, պէտք եղած անօրէնութիւնները ըրած է, և յուսալի է որ ի մօտուստ պիտի հրաւիրէ ընտրողները ի քուէարկութիւն։

Կոնդակ. — Նորընտիր Ս. Պատրիարք Հօր անդրանիկ կոնդակն հրատարակուեցաւ ապդ. լրագրաց մէջ՝ թէ՛ գրաբառ և թէ աշխարհաբառ լեզուաւ, որ իր մէջ կ'պարունակէ քրիստոնէական գեղեցիկ յորդորներ և խրատներ ամեն դասակարգի աղգայնոց. Սոյն Պատրիարքական կոնդակն կարդացուած է ամեն Հայ եկեղեցւոց մէջ։

Լուսաբերիչ Համբարձումէ էֆ. Իւթիւճեան. — Սոյն երիտասարդ արուեստագէտն որ մեր երկու տարիէ ի վեր հաստատուած է քաղաքս և կ'գործէ առանձին արուեստանոցի մէջ, թեև քիչ մ'ուշ՝ կ'պահք յանձնարարել մանաւորապէս Հայ հասարակութեան՝ իբր յաջողակ և ազնուաբարդ լուսանկարիչ՝ աշակերտ Հայրապետանոցի Ազատուլլահեան եղբարց։ Իր բերած գործողութիւնն, որ ոգին և փայլն է լուսանկարչութեան արուեստին, կրնանք ըսել թէ կատարելութեան հասուցած է երիտասարդ արուեստագէտն, որուն համզուելու համար բաւական է մի անգամ դիտել իր ձեռաց աշտադրութիւն եղող սքանչելի լուսանկարներն։ Իւթիւճեան էֆէնտիի իւր արհեստին մէջ ունեցած հմտութեան մի մեծ ապացոյց է նաև այն համարումն զոր կ'վայելէ քաղաքիս ամեն օտարազգի երևելեաց և բարձրաստիճան անձանց կողմէ՝ իւր նուրբ և գեղեցիկ լուսանկարներով, մինչդեռ համարումն կը վայելէ նաև բոլոր կառավարական պաշտօնէից և նոյն իսկ քաղաքիս վալեմ. կառավարչի կողմէ որ գնահատելով նորատաղանդն՝ իր երկու զաւակներն յանձնած է լուսանկարչութեան արհեստն ուսուցանելու համար։ Ամեն անոնք որ կ'փափաքին իրենց լուսանկարով ալբոմ մը իրապես գեղեցիկ մի զարդն կազմել և, ինչպես կ'ըսուի, մարդուս առջև երևիլ, թո՛ղ բարեհաճին անգամ մը այցելել Իւթիւճեան էֆէնտիի. Արուեստանոցն ի Փասալա փողոց և վստահ ենք թէ ըստ ամենայնի գոհ պիտի լինին։

ՓԱՂԱՔԱԿԱՆ

Մինչ եւրոպական հզօր պետութիւնները ռազմական ահաւոր պատրաստութիւններ կ'ընեն միջազգային սոսկալի պատերազմի մը նախատեսութեամբ, իրենց խորհրդարանները գլխաւորապէս մանր մունր ու փծոուն խնդիրներով կ'զբաղուին։ Այս կարգէն է Ֆրանսայի Ազգային ժողովը՝ ուր անձնական կրից և կուսակցական կատաղութեան թափը չափ չունի, այնպէս որ սատիրաւելի երեսփոխանները՝ երերուն պաշտօնէութեան մը համղէպ, դիրքը զրպարտելով կ'վտանգեն Պետութեան շահուց նուիրելի անդին ժամեր։ Աղատութեան զոհ՝ հանրաւարական Ռոտէնի մահուան տարեդարձի առթիւ եղած ցոյցն կ'անցնի ան-

լուով, թէև Պուլանժէ զօրավարն այն ճիւաղն է որ դեռ Ֆրանսայի ճակատագրին վրայ կ՚ծանրանայ, և կարծես թէ օրէ օր սպառնական երևոյթ մը կ՚առնու՝ յեղյեղուկ և արդի վարչային, ու կառավարական չիմք վիճակին տաղտկացած ժողովրդեան մը մէջ։ Ըստ երևոյթին Ֆրանսայի կառավարական կազմուածքն հիմնական փոփոխութեան սահմանուած է՝ ի՞նչորհս հակամարտ չահուց։ Բայց Բարիզի մէջ աչխարհահանդէսի գործերն անդուլ կ՚ընթանան, Էյֆելի աշտարակն 600 ոտք բարձրութեան կը հասնի, մինչդեռ հռչակաւոր Պ. Լըսէբս Բանամայրի ջրանցքին հակայ գործն ի կատար հանելու յուսահատ՝ կ՚հրաժարի և մի-լիոններ ի զուր կ՚վատնուին։ Ոչ նուազ զարմանալի է Անգլիական բարվէնդի կացութիւնն՝ ուր մէկ կողմէ Իրլանտայի յաւերտեան խնդիրն, միւս կողմէ աննչան միջադէպեր կենսական խնդիրներու լուծման արգելք կ՚լինին։ Ինչպէս կ՚ըսեն Անգլիացիք Մեծ Ծերունազարդ Մարդն, Կլատսթօն, ամեն ճիգ կ՚թափ վէ վերոյին խչխանութեան հասնելու համիան հարթել, և ըստ ոչ իր բարձր ու պատկառելի դիրքը կ՚մոռնայ անձնական խընդիրներու մէջ խեղաթիւրվիլ։ Իակ Բարնէլեան կուսակցութեան Դաչտի դատն կ՚չարունակուի կազմուած առեանի առջև։ Անգլիական և եդիպտական զօրքեր կ՚պատրաստուին նորէն քալել Սուաքինի դէմ, մինչ դերման նաւատորմ մ՚անգլիականին մօտ ցած, յանուն Զանզիպարի Սուլթանին՝ որ հիւանդ է, կ՚պաշարէ Ափրիկէի արևելեան ծովեզերքն գերմներու տուքնաան պատրիլելու պատրուակաւ, բուն նպատակ ունենալով տիրապետել դիւսոյին այդ կողմերուն։ Հետաքրքրաշարժ է նաև Ռուսիոյ և Անգլիոյ մէջ ծագած անհամաձայնութիւնն Պարսկաստանի մէջ՝ ուր Տըմբոնտ Ռօլիի՝ անգլիացի դեսպանը, կ՚յաջողի առևտրական դաշն կռել Շահին հետ, ինչպէս նաև երկաթուղիներ շինելու յորդորել, անգլիական վաճառականութեան նոր մրցում մը տալու մտօք՝ ի վնաս ռուսականին։ Հետևապէս Պարսկաստանի և Ռուսիոյ յարաբերութեանց մէջ ճկտում կայ և Պ. Կիրս յատուկ ծանուցագիր կ՚ուղղէ Պարսից կառավարութեան ճանչնալու իր Ռէչտի և Մէշհէտի հիւպատոսները։ Հնդկաստանի նոր փոխարքայն լորտ Լէնստաուն կ՚հասնի իր պաշտօնատեղին, և իր նախորդն լորտ Տըֆըրին Կալկադայի մէջ իր հրաժեշտի ողջոյնը տալու առթիւ կ՚արտասանէ ընչանակելի ատենախօսութիւն մը՝ որու մէջ կ՚գատապարտէ Աղջային հանրաժողովի խառնվայոյզ ընթացքն՝ սահմանադրական հիմնարկութիւններ Հնդկաստանի

մէջ հաստատելու համար։ Լորտ Ջըֆըրին կ'յայտարարէ որ անհնարին է հանրավարական օրինօք կառավարել 250 միլիօն ժողովուրդ մ'որ իր մէջն ունի անթիւ ազգութիւններ, կրօններ և քաղաքակրթութեան նախապատմական աստիճանէն մինչև բարձրագոյն աստիճանը դտնուող մարդիկ, թէ Անգլիա անգամ յաջորդական յառաջդիմութեամբ հասած է իր արդի խորհրդարանական դրութեան և թէ բրիտանական բոլոր գօրութեան նպատակն է այս այլազան և հակամարտ տարրներու մէջ խաղաղութիւնը պահել այնպէս որ մի ցեղ միւսին վրայ չտիրապետէ։ Աւստրիոյ կայսեր գահակալութեան քառասներորդ տարեդարձը կ'առնուի և իր հրամանաւ այլ և այլ բարեպաշտական հաստատութեանց կ'յատկացուին այն ամեն գումարներն զոր ժողովուրդն յօժարակամ ալիսի դործածէր յերախտադիտական ցոյց և ի պատիւ իր սիրելի կայսեր՝ որ վիճորկալի ժամանակ մ'երբ հպիւ տասն ինն տարեկան էր, գահն ելնելով՝ ամբարտաղեց դանազան յեղափոխութեանց պատճառաւ Հաբսպուրգեան գերդաստանի խարխլած դահը։ Միացեալ–Նահանգաց ընտրական մեծ պայքարին արդիւնքը կ'լինի նախորդ Նախագահ՝ Բլիվլէնտի պարտութիւնն, և հասարակապետական կուսակցութեան ընտրելին՝ Հէրիսընի ընտրութիւնն։ Պ. Բլիվլէնտ իր վերջին պատգամադիրը կ'ուղղէ առ ժողովդը, կ'գանգատի որ Միացեալ–Նահանգաց մէջ նախկին ժուժկալութեան և պարզութեան յաջորդած են պերճութիւն և ճոխութիւն. դառնապին կ'ցաւի որ կառավարութիւնը կ'յանդի սակաղնի խնդրոյն մէջ նոյն ընթացքը բռնել և ժողովրդէն միլիոններ կորզել, որ անօգուտ կ'մնան գանձուն մէջ։ կ'առաջարկէ տէրութեան ծախսուց չափովը տուրք դնել, և արդի դրութիւնն՝ Հաբսպուրգեան և դրամագլխի հասարակութիւն (communism) կ'անուանէ. կ'յարէ ըսէ՝ կ'ծիծաղի այն մարդոց վրայ որ կ'առաջարկեն կառավարութեան հարուստները պաշտպանել որպէս զի ասոնք ևս աղքատները խնամեն, և կ'պնդէ սակաղնոց արդար վերաքննութեան վրայ որպէս զի արդի պայմանաց ներքև տեսնուած տառապանքը թեթևանան։ Ի վերջ կ'ակնարկէ ձկնային խնդրոյն և կ'յայտնէ թէ Ազգային ժողովին մերժած դաշնադրութիւնն լաւագոյն, դործնական և երկու տէրութեանց համար իսկ պատուաբեր եղանակ մ'է այդ կնճռոտ խնդիրը լուծելու համար։

Խմբագիր–Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ